Azg Ազգ

Azg armenian daily

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999 ՇԱԲԱԹ 180 (1926)

Դաշնային ուժերը կանգ չեն առնի Թերեք գետի բնագծերում

ԹԵՈԴՈՍԻԱ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դաշնային ուժերը Չեչնիայում կանգ չեն առնի Թերեք գետի բնագծերում: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, ՌԴ պաշտպանության նախարար Իգոր Սերգեեւը այդ մասին հասկանալի է տվել Ուկրաինայի հակաօդային պաշտպանության ուժերի զորավարժությունների վայր ժամանելուց հետո լրագրողների հետ զրուցելիս:

«Զորքերը կանգ չեն առնի, նրանք կարունակեն կատարել ելուզակային կազմավորումներն ու ահաբեկչական խմբերը Չեչնիայի տարածքում վերացնելու խնդիրները», ասել է նախարարը:

Նրա խոսքերով, «զորքերը իրենց վիճակը կբարելավեն այնպես, որ այնտեղ վերահսկեն ողջ իրադրությունը»:

Մյուս կողմից, դաշնային ուժերի արեւելյան խմբավորման մասուլի կենտրոնի պետ Գենադի Ալյոխինը հաղորդել է, որ չեչենական զինված կազմավորումները կարող են 25 հազար զոհայիններ հանել դաշնային ուժերի դեմ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՈԱԿ-ի միացման բանակցութիւնները կը մտնեն գործնական փուլի մէջ

Հայաստան-սփյուռք խորհրդաժողովի առթիվ սփյուռքի տարբեր կողմերից ժամանած պատվիրակների շարքում էին նաեւ մեծ թվով ռամկավարներ՝ Մ. Նահանգներից, Լիբանանից, Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Արգենտինայից, Կիպրոսից, Երուսաղեմից, Հորդանանից եւ այլ վայրերից: Օգտվելով առիթից եւ Հայաստանի իշխանությունների հաջալերանքից, ժամանող պատվիրակների միջեւ տեղի ունեցան մի շարք բանակցություններ, որոնց արդյունքում ստորագրվեց մի համաձայնագիր եւ ընդունվեց հետեւյալ հայտարարությունը.

Սեպտեմբեր 22-24, 1999 թուին Երեւանի մէջ կայացող Հայաստան-Սփիւռք համաժողովին մասնակցող ՈԱԿ-ի ներկայացուցիչները, կողմերու իրաւասու մարմիններու տուած լիազօրութեամբ, ձեռնարկեցին խորհրդակցութեանց շարքի մը՝ վերջ տալու համար կազմակերպութեան ծոցին մէջ յառաջացած ներքին պառակտումին, որ իր բացասական անդրադարձը ունեցած էր ոչ միայն կուսակցութեան գործունէութեան եւ առաքելութեան վրայ, այլ նաեւ սփիւռքի քաղաքական իրականութեան հաւասարակշռութեան վրայ:

Թելադրուած ՈԱԿ-ի վաղուան հայրենանուէր առաքելութեան հրամայականէն՝ կողմերը որոշեցին տուեալ պայմանաժամի մը ընթացքին առնելու միացեալ ու գործնական քայլեր՝ փութով իրականացնելու համար շարքերուն համար այնքան ցանկալի միասնականութիւնը:

Իբրեւ առաջին գործնական նախաձեռնութիւն՝ ՈԱԿ-ը միացեալ պատուիրակութեամբ եւ միացեալ զեկոյցով հանդէս եկաւ Հայաստան - Սփիւռք համաժողովին:

Աւելի եւս ամրապնդելով միացման գործընթացը, որոշուեցաւ ներկայ թուականէն սկսեալ վերջ տալ մամուլի եւ այլ միջոցներով տարուող փոխադարձ քննադատութեանց եւ խծբծանքներուն եւ իրենց լիիրաւ անդամի իրաւիճակին մէջ վերահաստատել բոլոր այն ընկերները, որոնք ներկայ տագնապին պատճառաւ ենթարկուած էին հաւաքական թէ անհատական պատժամիջոցներու:

Կողմերը վճռած են ամէնէն կարճ պայմանաժամի ընթացքին ամբողջացնել բանակցութիւնները, վերականգնել կուսակցութեան կառոյցը եւ օժտելով զայն շարքերուն եւ հանրութեան վստահութիւնը վայելող ղեկավարութեամբ մը, հաւաքական ուժերով դիմել դէպի կուսակցութեան սրբազան նպատակները:

ՈԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՍՊԵԱԼ ՄԱՐՄԻՆ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Գաղտնիության առեղծվածը

Քոչարյան-Ալիեւ հանդիպումների շուրջ

ՈՒՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների Սադարակի հանդիպումը 4-դն էր վերջին ամիսներին եւ 1-ինը «երկու երկրների սահմանագլխին»: Որքան էլ կարեւոր էր այս կարգի հանդիպումը, որի համար հարկ չեղավ հազարավոր կիլոմետրեր կտրել, այնուամենայնիվ, եթե մինչ այդ հասարակայնությունը տեղեկացված լիներ, անձամբ ես մեր նախագահին «Ազգի» էջերում կհորդորեի ձեռնպահ մնալ Նախիջեւանի եւ Հայաստանի սահմանում Ալիեւի հետ այս կարգի «ծեփ-սեղմումից»: Թող հանդիպեին հայ-ադրբեջանական սահմանի ցանկացած այլ հատվածում, բայց ոչ երբեք Սադարակում: Ինչո՞ւ: Որովհետեւ Նախիջեւանը երբեք ադրբեջանական տարածք չի եղել եւ չէ: 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրով (Կարսի) Նախիջեւանը ճանաչվել է իբրեւ Ադրբեջանի խնամակալությանը հանձնված տարածք պրոտեկտորատ, երբեւէ երրորդ կողմի (հասկացիր՝ Հայաստանին) չհանձնելու պայմանով: Հասկանալի է, որ որեւէ երկրի սեփական տարածքը երբեք այդ նույն երկրին չի հանձնվում «խնամակալության»:

Կարսի պայմանագիրը կնքողներն այդ բանը շատ լավ էին հասկանում: Իսկ այժմ, երբ մենք համաձայնում ենք երկու նախագահների սադարակյան հանդիպումը գնահատել իբրեւ «երկու երկրների սահմանագլխին» տեղի ունեցած հանդիպում, ակամա առ ոչինչ ենք համարում Կարսի պայմանագրով արձանագրված այս չափազանց էական նրբերանգը, փաստորեն ընդունում ենք, որ Նախիջեւանը Ադրբեջանի տարածք է, Նախիջեւանի հետ մեր սահմանը՝ հայ-ադրբեջանական սահման:

Տես էջ 3

Վարչապետն ընդունեց Ռամկավար Ազատական կուսակցության ներկայացուցիչներին

Երեկ վարչապետ Վազգեն Սարգսյանը ընդունեց ՀՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանին եւ ՈԱԿ Կենտրոնական վարչության անդամ Հակոբ Ավետիքյանին:

Ռամկավար Ազատական կուսակցության ներկայացուցիչները կարեւորեցին Հայաստան-սփյուռք համաժողովի կազմակերպումը, որին մասնակցել էին կուսակցության անդամ մոտ 60 պատվիրակներ եւ բարձր գնահատեցին Վազգեն Սարգսյանի ելույթը համաժողովում: Նշվեց, որ ելույթը բավական մեծ խթան էր սփյուռքից ներդրումների հոսքի ապահովման առումով: Կարեւորվեց հատկապես մանր եւ միջին կապիտալի ներգրավման՝ քաջալերման անհրաժեշտությունը: Նշվեց, որ առաջիկայում նախատեսվում է անցկացնել ՀՈԱԿ համագումար:

Վազգեն Սարգսյանը կարեւորեց ավանդական կուսակցությունների դերը հանրապետական ներքաղաքական կյանքում եւ Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդման խնդրում: Վարչապետը ողջունեց ներդրումների ներգրավման ուղղությամբ կուսակցության նախաձեռնությունները ու կիսեց մտահոգությունները:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գորը ժամկետ է նշում Ստամբուլի նոյեմբերյան գագաթաժողովը

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին հղած ուղերձում Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխնախագահ Ալ Գորը նշում է, որ ուշադրությամբ հետեւում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների ուղղակի երկխոսության արդյունքում Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ վերջին ամիսներին ձեռք բերած կարեւոր առաջընթացին:

«Դուք պարզ ցույց տվեցիք անվտանգության, խաղաղության եւ բարգավաճման հասնելու ճանապարհին գլխավոր խոչընդոտի վերացման գործում ձեր նվիրվածությունը: Հասկանում եմ, որ այդ բանակցությունները նախատեսում են ոչ հետ զիջումներ, որոնց պետք է գնան երկու կողմերը, բայց ես միաժամանակ կարծում եմ, որ ձեր որոշումը՝ օգտվել այդ բացառիկ հնարավորությունից, իմաստուն է ու քաջ», նշված է ուղերձում:

Ալ Գորի խոսքերով, «եթե դուք կարողանաք ձեր աշխատանքի այդ փուլն ավարտել մինչեւ նոյեմբերին կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովը, ապա Ստամբուլում ԵԱՀԿ ողջ ընկերակցությունն իր աջակցությունը կհայտնի Ձեր ձեռք բերած առաջընթացին, ինչպես նաեւ կհաստատի Ձեր տեսակետը տարածաշրջանում խաղաղության եւ կայունության վերաբերյալ»: ԱՄՆ փոխնախագահն իր ուղերձում նաեւ համոզմունք է հայտնում, որ «այդ քայլերը նոր հնարավորություններ կբացեն Հայաստանի զարգացման, հարեւան երկրների հետ համագործակցության եւ գործընկերության համար, ինչը Դուք ձգտում եք հաստատել Եվրաասիական ողջ ընկերակցության հետ»:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՓՈՂԱԲԵՐ

Այդ պաշտոններն ավելի շատ իրավունքներ են տալիս, քան պարտականություններ

Ինչո՞ւ են «հեղինակությունները» ուզում համայնքապետ դառնալ

ՆԱՐԻՆԵ ԴՈՒԼԲԱՐՅԱՆ

«Մինչեւ 90 թվականը գործում էր տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների համակարգը, որ 75 տոկոս պարտականություն էր նշանակում եւ 25 տոկոս իրավունք, իսկ ներկայիս տեղական ինքնակառավարման մարիններում այս պաշտոնը միայն իրավունքներ է տալիս: Սա է խնդիրը: Եթե կարողանանք օրենքով գոնե 80-20 հարաբերակցություն հաստատել, որ համայնքապետի պաշտոնը 80 տոկոս պարտականություն լինի եւ 20 տոկոս իրավունք, շատ ընկերներ չեն ձգտի այդ պաշտոնին», «Ազգին» հանրամատչելի բացատրեց «Կայունություն» խմբի ղեկավար, ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյանը, որ տեղական ինքնակառավարման, ինչպես նաեւ տարածքային կառավարման մարմիններում աշխատելու մեծ փորձառություն ունի՝ սկսյալ խորհրդային գործկոմներից մինչեւ մարզպետ: Հովհաննես Հովհաննիսյանը մեր առաջարկով պարզաբանեց այն հանելուկը, թե ինչո՞ւ համայնքապետերի թափուր աթոռների համար մրցակցության հայտ են ներկայացրել թաղային բազմաթիվ հեղինակություններ ու անգամ իրական տարբեր Հայաստանի գրեթե բոլոր ծագերում, իսկ կուսակցությունները համեստորեն գերադասում են խուսափել մրցակցությունից:

Եթե փող չունես, մի առաջադրվիր

ԱԺՄ գրասենյակը բոլոր այն հարցումներին, թե ինչո՞ւ է իրենց մասնակցությունն այսքան կրավորական տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, անկեղծորեն արձագանքում է՝ փող չունենք, ուստի բավարարվում ենք մեկ-երկու առաջադրումով:

ԱԺ-ում մեր զրուցակից պատգամավորները համաձայն էին, այս պաշտոնը փողաբեր է, ուստի եւ վերստանձնելը կամ ձեռք բերելը պահանջում է համապատասխան ինվեստիցիա:

Տես էջ 3

Ռուսաստանը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպումը

ՄՈՍԿՎԱ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների նախօրյակին կայացած հանդիպումը եւ հետագա առաջընթաց է ակնկալում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ասպարեզում: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այդ մասին այսօր հայտարարել է Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Վլադիմիր Ռախմանինը:

Ելույթ ունենալով ճեպասուլիսում, Ռուսաստանի արտգործնախարարության տեղեկատվության եւ գրահրատարակչության դեպարտամենտի տնօրենն ընդգծել է, որ նախագահների երկխոսության շնորհիվ «արդեն որոշ արդյունքներ են ձեռք բերված»: Մասնավորապես, նրա խոսքերով ասած, «ամրապնդվել է հրադադարի ռեժիմը, աճում է վստահությունը հակամարտության կողմերի միջեւ, հանգամանալի խոսակցություններ են ծավալվում արտգործնախարարների մակարդակով, շարունակվում է ռազմագերիների փոխանակումը ԵԱՀԿ-ի օժանդակությամբ»:

«Հակամարտության կողմերի ցանկություններին համապատասխան, իրենց աշխատանքն են աշխուժացրել նաեւ Մինսկի խմբի համանախագահները», նշել է Վլադիմիր Ռախմանինը:

digitised by A.R.A.R.@

ՈՒՇԱԳԻՐ

Երեկ Հայաստանի «Հայներարտբանկի» նախագահ Բագրատ Ասատրյանը հրավիրել էր լրագրողներին մի քանի դեկլարատիվ ու նաեւ կոնկրետ հայտարարություններ անելու համար: Հիշեցնենք, որ տրն Ասատրյանը «Հայներարտբանկի» խորհրդի նախագահի պաշտոնը երեք ամիս է ինչ համատեղում է ՀՀ բանկերի ասոցիացիայի նախագահի պաշտոնի հետ: Եւ երեկվա ասուլիսը նրա առաջին հանդեսությունն էր «Հայներարտբանկի» ծրագրերի ու նպատակների վերաբերյալ՝ ՀՀ տնտեսության ներկա վիճակի վերլուծության տարրով:

«Հայներարտբանկը» տարիներ շարունակ եղել է Հայաստանի ամենախոշոր, գործունեության որոշակի դրոշներ ու ավանդույթներ ունեցող առեւտրային բանկը, որը սակայն վերջին երկու տարիներին դասիվացել էր՝ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով: Բանկը մտակել է լուրջ ռազմավարություն, կատարվել եւ շարունակվելու են կառուցվածքային բարեփոխումներ ու կոնկրետ ծրագրեր, որոնց մասին տրն Ասատրյանը կհայտարարի շատ մոտ ապագայում: Բանկը շարունակելու է զարգացնել իր ավանդույթները եւ ընդլայնել գործունեության դաշտը: Պատկերավոր ասած՝ «Հայներարտբանկը» շարքային բանկ չէ եւ, հետեւաբար, ունի մեծ հավակնություններ, մասնավորապես էներգետիկայի ոլորտում, որտեղ արդեն իսկ ներգրավված է բանկի ակտիվների մոտ 60 տոկոսը, ինչպես նաեւ՝ վճռական շրջադարձ կատարելու ձգտում դեպի արդյունաբերության ոլորտ: Ինչ վերաբերում է արտահանման ֆինանսավորման ծավալներին, ապա բոլորին է հայտնի, այստեղ դեռ զրոյական մակարդակ է տիրում, սակայն դա չի նշանակում, որ բանկը չի փորձելու իր գործելաոճով իր իսկ անվանը հավատարիմ մնալ: Այդ բոլոր ծրագրերը «Հայներարտբանկի» նախագահն, իհարկե, պետք է համաձայնեցնի բանկի խոշոր բաժնետերերի հետ, որոնք (մասնավորապես՝ մեկը) հասարակությանը ոչ անհայտ գործիչներ են, սակայն նա ավելի շատ հակված է այն կարծիքին, որ մեկ անձի բանկը ընդունակ պետք է լինի համարժեք արձագանքելու ծրագրերին ու ցանկություններին: Հետագայում չի բացառվում, որ բաժնետիրական հաշտարկվող բանկային բարձր տոկոսադրույքների խնդրին, ապա տրն Ասատրյանի դիրքորոշումը կարծր էր՝ տոկոսադրույքների մասին խոսելն անհեթեթություն է, քանի որ «փողը միշտ արժե այնքան, ինչքան կարող է արժեք ունենալ», վարկ տալը շարունակում է մնալ մեծ ռիսկ, քանի որ հայաստանյան վարկառուները հուսալի չեն, եւ, ընդհանրապես, մեր մյուս դժբախտությունն այն է, որ մեզանում չկա պարտավորությունների կատարման կուլտուրա: Ասել է թե՝ տվեք մեզ երաշխիքներ, մենք էլ ձեզ կտանք ցածր տոկոսադրույքով վարկեր:

ԱՍՈՒԼԻՍ

«Հայներարտբանկը» շարքային բանկ չէ եւ ունի մեծ հավակնություններ

Բագրատ Ասատրյանի նորարարությունները ու հայտնագործությունը



Երեկ Բ. Ասատրյանը հայտարարեց նաեւ մի հետաքրքիր հայտնագործության մասին: Նրա հետազոտության Ազգային գրադարանի արխիվներում կատարած ուսումնասիրությունները արդյունքում պարզվում է, որ դեռեւս դարասկզբին Հայաստանում եղել են 30-35 վարկային, մոտ 20 խնայողական ընկերություն, եւ որքան էլ որ զարմանալի է 4 բանկ: Դրանցից մեկը՝ Վոլժսկ-Կամսկի առեւտրային բանկի գործակալությունը հիմնվել է 1909 հոկտեմբերի 17-ին եւ գտնվել է այն նույն շենքում, որտեղ այսօր հանգրվանել է «Հայներարտը»: Այնպես որ, ոչինչ պատահական չէ եւ «Հայներարտբանկը» շուտով կարող է տոնել իր... 90-ամյակը:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՏՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հելսինկյան միջազգային ֆեդերացիայի կոչը ՀՀ նախագահին

Քանտարկյալների մահվան եւ խոշտանգման դեպքեր Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարդու իրավունքների Հելսինկյան միջազգային ֆեդերացիան (ՀՄՖ) (Ավստրիա) բաց նամակ է հղել Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի անունով: ՀՄՖ գործադիր տնօրեն Աարոն Ռոդեսի ստորագրած նամակում, մասնավորապես, ցանկություն է արտահայտվում ՀՀ նախագահի ուշադրությունը հրավիրել Օլեգ Արիշինի եւ Ստեփան Գեւորգյանի մահվան հանգամանքների վրա, որոնք մահացել են, համապատասխանաբար, 1999 թ. ապրիլի 27-ին եւ 15-ին: Մահվան պահին երկուսն էլ բանտարկության մեջ են եղել: Նախագահի ուշադրությունը հրավիրվում է նաեւ Արսեն Ստեփանյանի մահվան հանգամանքների վրա, որը վախճանվել է Արաբկիրի ոստիկանական տեղամասից տուն վերադառնալուց անմիջապես հետո, որտեղ նա հարցաքննվել էր: ՀՄՖ-ի կարծիքով, լուրջ վկայություններ կան, որ այդ մարդիկ զոհվել են ծեծուջարդի պատճառով կամ սպանվել են ոստիկանության աշխատակիցների կողմից: Արիշինը եւ Գեւորգյանը բանտարկված են եղել կողոպուտի եւ իշխանության ներկայացուցիչների վրա հարձակման համար: Համաձայն պաշտոնական վարկածի, Արիշինը վախճանվել է թմրադեղերի գերչափաքանակից, իսկ Գեւորգյանի դիակը ծածկված է եղել դաժան ծեծի ակնհայտ հետքերով: Արսեն Ստեփանյանը բերման է ենթարկվել Արաբկիրի ոստիկանական տեղամաս՝ էլեկտրացանցի նախկինում ոստիկան աշխատակցի հետ վեճից հետո: Նա ոստիկանական տեղամասից տուն է վերադարձել իր կալանքից հետո մի քանի ժամ անց եւ մահացել նույն օրը երեկոյան: Դատաբժշկական փորձագետի եզրակացության համաձայն, նա բազմաթիվ կոտրվածքներ, ինչպես նաեւ ուղի նոպա է ունեցել: ՀՄՖ-ի տվյալներով, այդ փաստերի կապակցությամբ ոչ ոք չի դատապարտվել: Արիշինի եւ Գեւորգյանի ընտանիքներին ծանուցվել է, որ գործերը մահվան փաստերի առնչությամբ փակված են, իսկ Ստեփանյանի մահվան կապակցությամբ նույնիսկ քրեական գործ չի հարուցվել: ՀՄՖ-ն խնդրում է Հայաստանի նախագահին օգնել պարզաբանելու այդ փաստերը:

«Քանի որ Հայաստանը ձգտում է դառնալ Եվրոպայի խորհրդի անդամ, ինչպես նաեւ ձգտում է Եվրոպական կառույցների հետ հետագա համագործակցության, անհրաժեշտ է, որպեսզի նա ցուցադրի իր հավատարմությունն արդարությանը՝ պաշտոնական ստիպողական ուժերի անվայել վարքին առնչվող դեպքերում», ասվում է նամակում: Նամակի հեղինակները գտնում են նաեւ, որ կառավարությունը պետք է նպաստի դատական համակարգի նկատմամբ ավելի մեծ վստահության հաստատմանը՝ օբյեկտիվ հետաքննություն անցկացնելու միջոցով, որը կարող է ներառել ածյունների էկսգումացիա եւ անկախ դատաբժշկական փորձաքննություն:

Տեղեկանք. Մարդու իրավունքների Հելսինկյան միջազգային ֆեդերացիան ներկայացնում է Եվրոպայի, նախկին Խորհրդային Միության եւ Հյուսիսային Ամերիկայի մարդու իրավունքների հարցով զբաղվող 39 անկախ կազմակերպություններ:

ՀԱՍՏԱՏՈՍ

Հաղթող ճանաչվեց «Զեններ Զահլերը»

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վերջերս Համայնքների զարգացման ծրագրի շրջանակներում գնումներ իրականացնող մրցութային հանձնաժողովը հայտարարել էր ջրաչափերի գնման միջազգային գնանշման առաջարկների մրցույթ: Մասնակցում էին միջազգային 3 կազմակերպություններ: Այսօր ծրագրի ղեկավարման գրասենյակում նրա տնօրեն Վարազդատ Ավոյանը հայտնեց, որ մրցույթի հաղթող է ճանաչվել գերմանական «Զեններ Զահլեր» կազմակերպությունը, որի առաջարկը, համապատասխանելով պահանջվող տեխնիկական մասնագրերին, ամենաէժանն է:

Վրաստանի նախագահը կայցելի Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան

ԹԲԻԼԻՍԻ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների մասին Վրաստանի նախագահի հրամանագրի համաձայն հոկտեմբերի 18-ին այստեղ նախատեսվում է մի շարք օբյեկտներ բացել: Այսպես, տարածաշրջանում նախագահի ներկայացուցիչ Գիգլա Բարամիձեն հայտարարել է, որ հակաօդային պաշտպանության ռուսական նախկին զորամասի տարածքում Ախալքալաքում կբացվի Փոստային բանկի մասնաճյուղ: Ազարվեսի գյուղում կբացվի էդուարդ Շեւարդնաձեի անվան հայկական միջնակարգ դպրոցը 300 սովորողի համար: Բացի այդ, Ախալցխայում կգործարկվի ջրատարը, որը ջրով կապահովի 1700 ընտանիքների: Արալ եւ Ուդեսա գյուղերում շահագործման կհանձնվի 27 մետրանոց ավտոմոբիլային կամուրջը: Բորժոմի շրջանում կսկսի գործել նոր եկեղեցին: Դրանով կավարտվի Սամցխե-Ջավախեթիի մասին նախագահի հրամանագրի իրականացման առաջին փուլը:

«Հայէներգանորոգումը» շարունակում է բուժել էներգահամակարգի «վերքերը»

Հայաստանի տնտեսության առավել պահպանված եւ գործուն օղակը՝ էներգահամակարգը, որն այսօր ոչ միայն երկրի ներքին պահանջարկի ապահովման, այլեւ արտահանման առայժմ մասամբ օգտագործվող ծավալներ ունի, ինքն էլ օգնության կարոտ է, մինչդեռ արտադրական հզորություններն ապահովող ՋԷԿ-երում, ՀԷԿ-երում եւ ատոմակայանում շահագործվող սարքավորումների վերարտադրությանն ուղղված ներդրումները նվազելու միտում ունեն: «Հայէներգանորոգում» պետական փակ բաժնետիրական ընկերության ֆինանսավորումը, համապատասխանաբար՝ իրականացվող աշխատանքների ծավալը վերջին երեք տարիների ընթացքում երկու-երեք անգամ, անձնակազմը՝ երկու անգամ կրճատվել է (ծեռնարկությունն այսօր 345 աշխատող ունի), սակայն ծեռնարկության արտադրական ներուժը գրեթե ամբողջությամբ պահպանվել է, հաստոցները, սարքավորումները աշխատունակ վիճակում են, եւ այսօր էլ բարձորակ անձնակազմն ի վիճակի է լուծել ամենաբարդ տեխնիկական խնդիրներ, երեկ ծեռնարկություն այցելած լրագրողների խմբին հոյարտությամբ հավաստեց գործադիր տնօրեն Վիլեն Կարապետյանը:

«Հայէներգանորոգումը» 55 տարեկան է, ունի հսկայական տնտեսություն՝ էլեկտրակայաններում կիրառվող տուրբինների, շարժիչների եւ գեներատորների, ոռոտորների, աշխատանքային անիվների եւ այլ մեծուփոր սարքավորումների վերանորոգումն ապահովող էլեկտրական (գեներատորային եւ տրանսֆորմատորային տեղամասերից բաղկացած) արտադրամաս, մեխանիկական եւ յուղերի վերամշակման արտադրամասեր, գործարանը տրամադրիչ օղակի մեջ առած կանաչ գոտուց, ծեռնարկության «կենսագրության» ուշագրավ էջերն արձանագրող թանգարան եւ ընդարձակ դահլիճ, ինքնուրույն էներգասնուցման, օդափոխության եւ ջրամատակարարման համակարգերով հագեցած զույգ ոմբաթաստարաններ, որոնք արտակարգ իրավիճակներում ի վիճակի են պատսպարել ավելի քան 350 հոգու:

«Հայէներգանորոգման» մասնագետների ուժերով չորս տարի առաջ նորոգվել է Չորագեսի գրեթե մոխրացած տրանսֆորմատորը, որի «վերակենդանացումը» ֆրանսիացի մասնագետներն անհնար էին համարել, Գյումուշ ՀԷԿ-ում 1995 թ. տեղի ունեցած վթարից արտահոսքի մասնագետների գնահատմամբ անհուսալիորեն վնասված չորս ագրեգատները (վերանորոգել է «Հայէներգանորոգում» ծեռնարկության հիմնադիր աշխատակից Ցոլակ Գալստյանի բրիգադը), Երեւանի ՋԷԿ-ի 1993 թ. վթարված յոթերորդ բլոկը, որի նորոգումը նույնպես կասկած էր ներշնչում օտար մասնագետներին: Էներգետիկ ճգնաժամի տարիներին, երբ ՀԷԿ-երի տեսակարար կշիռը էներգաբալանսում գերակշռում էր, ծեռնարկության մասնագետները գիշեր-ցերեկ աշխատել են՝ ապահովելով Հայաստանի տասը ՀԷԿ-երի եւ Ղարաբաղի Թերթերի ՀԷԿ-ի աշխատանքը. երեք տարվա ընթացքում նորոգվել է 22 ագրեգատ, ինչը, որն Կարապետյանի գնահատմամբ, ռեկորդային ցուցանիշ է ծեռնարկության համար: Հիմա ֆինանսավորումը նվազել է՝ 1995 թ. կատարված 530 մլն դրամի աշխատանքների դիմաց այս տարվա 9 ամիսների ընթացքում իրականացվել է ընդամենը 130 մլն-ի աշխատանք, իսկ էներգահամակարգն այդօրինակ սպառողական վերաբերմունք երկար չի կարող հանդուրժել: Ծեռնարկության տնօրենը համոզված է, որ վերանորոգումների՝ վերջերս նախարար Դավիթ Ղադոյանի հավանությանն արժանացած նոր հայեցակարգը բեկում կմտցնի էներգահամակարգի «բուժումն» իրականացնող այս օղակում եւ արդեն իսկ հաջորդ տարի շոշափելի արդյունք կտա:

Ծեռնարկության մասնագետներն անցած շաբաթ ավարտել են Հրազդանի ՋԷԿ-ի 220 մգվտ-անոց տուրբինի վերանորոգումը, աշխատում են ՀԱԷԿ-ի երկրորդ բլոկի երկու գեներատորների վրա, որը մտադիր են ավարտել նախատեսված ժամկետից 10 օր շուտ, ընթացքի մեջ է Տաթեւի ՀԷԿ-ի գեներատորի, Շինուհայրի ենթակայանի 220 հազար կվտ-անոց տրանսֆորմատորի, Երեւանի ՋԷԿ-ի ջերմային ցանցի, Շամբի ՀԷԿ-ի տուրբինի աշխատանքային անիվի վերանորոգումը (աշխատանքների 80 տոկոսն իրականացվում է տեղում):

Խորհրդային տարիների համեմատ (այն ժամանակ ծեռնարկությունը, ԽՍՀՄ հանրապետությունների պատվերներն սպասարկելուն զուգահեռ պահեստամասեր էր առաքում Սիբիրից մինչեւ Հեռավոր Արեւելք) ծեռնարկության ծանրաբեռնվածությունն, անշուշտ, էապես նվազել է, սակայն գործարանից «ոչ մի մագ» չի պակասել, ինչն արդեն իսկ երեւույթ է հետխորհրդային ալան-թալանի օրերին բառիս բուն իմաստով կողոպտված մեր ծեռնարկությունների համար, ուստի, ինքնադատելով կիրառվող սակագնային քաղաքականությունը, հարկ է արժանին մատուցել էներգետիկների ամենօրյա աշխատանքին՝ նրանց, ինչպես երկրին ընդհանրապես, առավել «լուսավոր» ժամանակներ մաղթելով:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ. 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգային շարուածք
«Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նյութերը չեն գրախօսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

երեկոյան եւ առավոտյան խորհրդարանական նիստերն էականորեն տարբերվում են, եթե առավոտյան 131 պատգամավորից 80-ը ներկա է լինում, առա մեծ ընդմիջումից հետո պատգամավորաց շարքերը սկսում են նոսրանալ, եւ մթնշաղի հետ տեղերում կարելի է տեսնել միայն ամենահամառ պատգամավորներին, որոնք առավելագույնը երեք տասնյակ են: Հերթական եռօրյայի աշխատանքի վերջին եւ ոչ մի օրինագիծ քվեարկության չդրվեց՝ ի խախտումն ԱԺ կանոնակարգի, քանզի խորհրդարանականները պատշաճ չեն համարում իրենց աշխատանքային օրն անցկացնել պրոֆեսիոնալ ԱԺ-ում: Ներկա խորհրդարանը հետեւում է Վարդան Այգեկցու հայտնի առակին՝ վաս իշխանի եւ նրան հաջորդած առավել վաս որդու մասին: Եթե նախորդ ԱԺ-ն ինքնադադարվում էր վաս հաճախումների եւ աշխատանքային եռանդի նվազման համար, առա այս խորհրդարանը դեռ նոր սկսած իր աշխատանքները՝ աչքի է ընկնում ավելի ցածր օգգ-ով: Բնութագրական է նաեւ նիստը վարողների փորձի պակասությունը. ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Միրոյանին այդպես էլ չի հաջողվում յուրացնել ԱԺ կանոնակարգի եւ ընթացակարգի այբուբենը, ինչն անընդհատ հարուցում է խորհրդարանական դահլիճի ծիծաղն ու կատակների հեղեղը: Եվ նիստի ընթացքում պարբերաբար հնչող Ռուբեն Միրոյանի ձայնը՝ ուղղված «իրենց աշխատասենյակներում աշխատող պատգամավորներին՝ վերադառնալու նիստերի դահլիճ», մնում է ձայն բարբառո հանապատի, քանզի աշխատասենյակներում պատգամավորներ չիմ, առավել եւս աշխատող: Փոխարենը խորհրդարանում ծաղկում է անեկդոտի ժանրը: ԱԺ հիշյալ փոխխոսնակին, որ բարձր թիկնաթոռին սիրում է բազմել հայտնի դիրքով, ՀԺԿ պատգամավորներից մեկը հոգատար խորհուրդ է տալիս. «Երբ ննում եմ, վերմակով ծածկվեմ, թե չէ օդափոխիչից սառը օդ է փչում, եւ կմրսեմ միջանցահովիկի տակ»: Ընտրողներից ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանին պարբերաբար նամակներ են առաքվում. «Այն, որ մեզ հույսեր տվեցիր ու չկատարեցիր, ոչինչ, այն, որ խոստումներ տվեցիր ու այժմ լռում ես, ոչինչ, բայց խաղցած ենք ու թախանձագին խնդրում ենք գառը, որ մորթեցինք ոտքերդ առջեւ, ետ տուր»:

Այս նույն շարքից է նաեւ խորհրդարանական նիստերի դահլիճում կասկածելի բառաղաշարի գործածումը: «Գեղարքունիք» հայելցի հինգվուրց բառը, որ բոլորիս հայտնի ստուգաբանությամբ նշանակում է գեղեցիկ արքունիք, եւ որին զուգահեռ ունենք Բզնունիք, Վարաժնունիք վաղնջական տեղանուններ, «Միասնության» խմբակցության անդամ եւ կինեմատոգրաֆիստների միության նախագահ Սերգեյ Իսրայելյանի շուրթերում դարձավ անբարո կացութաձեւը բնութագրող մի բառ, եւ եթե պատգամավոր Հերմինե Նաղդալյանին «ապուշ» բառի օգտագործման համար նկատողություն արվեց, առա Սերգեյ Իսրայելյանի «Գեղարքունիք» բառի ստուգաբանությունը միայն համընդհանուր ոգեւորություն առաջ բերեց:

«Բազարային առօրյա եւ անբարո կացութաձեւ»

Արշանագրում են ԱԺ պատգամավորները

Այստեղ է, որ առմասական ընդդիմությունը կասեր՝ ահա նրանց հոգի բարքերը, իսկ մենք միայն արձանագրենք՝ նոր խորհրդարան, նոր բարքեր:

«Ոչկում էլ չկա, գնանք բողոքենք»

Կարեն Դեմիրճյանը խորհրդարանին հիշեցրեց ժողովրդի շուրթերով արտահայտված այս կարոտը: Անասնաբուժության մասին օրենքի կիսատ մնացած ինքնակումից հետո, որի ընթացքում ԱԺ սակավաթիվ պատգամավորներին բացատրվում էր, թե ինչպես է միսը դառնում մսամթերք, եւ ինչպիսին պետք է լինի մսամթերքի եւ երշիկեղենի որակի վերահսկողությունը, խորհրդարանը սահուն անցում կատարեց հրապարակային քաղաքականության, որի ժանրը, ցավոք, ի տարբերություն անեկդոտի ժանրի, վերջերս ակնհայտ անկում է ապրում: Վերջին հրապարակային քաղաքականության մոդիկանները «Իրավունք եւ միաբանություն», ՀՅԴ խմբակցության անդամներն էին, ի մասնավորի՝ Գերագույն խորհրդում աշխատելու փորձ ունեցած պատգամավորները: Երեքաթթին հայատարարությունների օրն էր, եւ Աղասի Արշակյանը հավաստեց, որ ներկայիս իշխանությունները նախորդ վարչակարգի գործունեությանը չտալով իրավական եւ քաղաքական գնահատական, պարարտ հող են նախապատրաստում նրանց վերազարթոնքի եւ համախմբման համար: Բաբկեն Արարքյանի եւ ՀՀՇ հիմնադիրների կողմից ստեղծված «Արմատ» կազմակերպության շնորհանդեսի մանրամասն լուսաբանումն ազգային հեռուստատեսությամբ եւ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում «Իրավունք եւ միաբանության» անունից գնահատվեց իբրեւ միտումնավոր քաղաքականություն. «Կերպարանափոխված ուժերն ու անհատները կարողացան պահպանել իրենց ուժերը», մեր կողմից հավելենք՝ շատ անգամ նաեւ պատգամավորները: «Իրավունք եւ միաբանությունն» առաջարկում է ԱԺ ղեկավարությանն արագորեն նվազող իրենց հեղինակության խորապատկերում զգոն եւ ուշադիր լինել, եւ իբրեւ առաջին քայլ՝ պահպանել Բաբկեն Արարքյանի ժամանակներից ժառանգված ԱԺ կանոնակարգը: Աղասի Արշակյանը պնդեց, որ իրենց խմբակցության հանդեպ որդեգրվել է մեկուսացման եւ անտեսման դիրքորոշում: «Իրավունք եւ միաբանության» անդամներն ընդգրկված չեն ստրասբուրգյան միջխորհրդարանական հանձնախմբի կազմում, «Խորհրդարանական ժամ» հեռուստահաղորդման ժամանակ երբեք չի տրվում, օտարերկրյա գործուղումներում երբեմն չեն ընդգրկվում իրենց անդամները: ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանը մերժեց «իզոլյացիոնիզմի» սույն մեղադրանքը: ՀՅԴ խմբակցության կողմից Աղվան Վարդանյանն անդրադարձավ կարեւորագույն մի խնդրի, հոկտեմբերի 24-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին՝ դրանք գնահատելով իբրեւ հասարակության հավատը պետության հանդեպ վերականգնելու հնարավորություն. «ԱԺ-ն իրավունք չունի դիտորդի դերում մնալու, աթիթ եւ պատեհություն կա, որպեսզի ԱԺ-ն հավաքաբար դիրքորոշում հայտնի ընտրությունների առիթով՝ նպաստելով Հայաստանում ընտրական համակարգի կայացմանը»: ՀՅԴ-ն առաջարկում է ստեղծել պատգամավորական խմբեր՝ ընտրությունների ընթացքին հետեւելու համար, նշելով, որ պատգամավորների հետ մեկտեղ այդ խմբերում պետք է գործեն կառավարության եւ նախագահի ներկայացուցիչները, որպեսզի տեղական իշխանությունը փոխանցվի արժանավոր մարդկանց: ԱԺ ղեկավարության վերաբերմունքն այս առաջարկությանը պարզ կդառնա առաջիկայում:

Հրապարակային քաղաքականության բռնկումներին զուգահեռ՝ Դավիթաբեկի նախկին համայնքապետ Ռուբեն Գեւորգյանը, որը հայտնի է իր բանաստեղծական կենսագրությամբ, բավական անհասկանալի մի հայտարարություն ընթերցեց մեր «բազարային առօրյայի եւ անբարո կացութաձեւի» մասին՝ չմոռանալով քարեր նետել անկախ կամ մասնավոր մամուլի պարտեզը՝ պնդելով, թե անկախ մամուլն անդրադառնում է հասարակության համար արժեք չներկայացնող լրատվությանը: Ռուբեն Գեւորգյանը խոսում էր ժողովրդի բվառության, նախորդ վարչակարգի սխալների, արյունով ողողված հայրենիքի եւ մտքի առաջնորդների մասին: Ազնիվ գաղափարներ, որ ընդդիմադիր պատգամավորներից մեկի բերանով՝ սրաճմլիկ զեղում էր ընդամենը: Լրագրողների աքսելությունն է արձանագրել իրականությունն անչառ հայելու պես, իսկ օրենսդիրները պետք է փորձեն վերափոխել այդ իրականությունը եւ ոչ թե հոգեցունց արձանագրումներ կատարել, հակառակ դեպքում՝ չորրորդ եւ առաջին իշխանությունների գործառույթները կատարալուծվեն:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՓՈՂԱԲԵՐ

Այդ պատշտոններն ավելի շատ...

Սկիզբը էջ 1

Միաժամանակ Հովհաննես Հովհաննիսյանն անկեղծ էր, միայն տեղական ինքնակառավարման մարմինների օրենքը փոխելը բավական չէ բարձրացնելու կառավարման այս օղակի գործունեության արդյունավետությունը. «Կարծում եմ կառավարման այս ամբողջ բուրգը պետք է փոխել, ամբողջ բուրգի վերանայումից հետո միայն վերեւից ներքեւ, կամ ներքեւից վերեւ իշխանության խողովակը կսկսի լիարժեք գործել»: «Կայունություն» խմբի քարտուղար Վարդան Այվազյանը, որը եւս տեղական ինքնակառավարման մարմիններից է անցել օրենսդիր ոլորտ՝ Չարենցավանի քաղաքապետի պատշտոնից, համաձայնեց իր գործընկերոջ հետ, որ պարտականությունները եւ իրավունքները հավասարաչափ չեն բաշխված, բայց նախկին քաղաքապետի համոզմամբ, խնդիրը նաեւ ֆինանսական է. «Առանց գումարի առաջարկում են, որ մարդիկ գործ անեն»: Բայց երկու պատգամավորներն էլ անկեղծ էին. «Համատարած գործազրկության պայմաններում մարդիկ իրենց համար գործ են փնտրում»: Եվ հաջողությամբ գտնում են: Երբ պետության մեջ ծեներեցությամբ կամ տնտեսական գործունեությամբ զբաղվելը շահավետ չէ, մարդիկ նետվում են դեպի իշխանության համակարգը՝ պատշտոնյայի կարգավիճակը դառնում է ամենաեկամտաբեր: Հովհաննես Հովհաննիսյանը անդրադարձավ վարչապետի վերջերս ընդունած որոշումներին, որի արդյունքում պատշտոնազրկվեց գյուղապետների մի ողջ խումբ: Պատգամավորները եզրակացրին, թե սա մասամբ զսպել է որոշ համայնքապետների ախորժակը. «Եթե նրանք հասկանան, որ բացի իրավունքներից կա նաեւ պատասխանատվություն, իրենց կարող են աշխատանքից նաեւ հեռացնել, հրապարակային պատժել, ապա գործունեությունը փոքր-ինչ այլ կերպ կկառուցեն»:

Փաստենք, որ թեեւ հոկտեմբերի 24-ին տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ ավագանու ընտրություններն են, բայց օրակարգում ռազմավարական փոփոխության խնդիր կա համայնքապետների ընտրվի պատշտոնները վերածել նշանակովի կառավարիչների կարգավիճակի, այս պարագայում թերի միջնակարգ կրթություն ունեցող եւ պետական կառավարման ոլորտում երբեւէ չաշխատած մարդկանց առջեւ կփակվի դուռը դեպի առայժմ ամենաեկամտաբեր այս պատշտոնները:

Գաղտնիության առեղծվածը

Սկիզբը էջ 1

Մինչդեռ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում, ըստ իս, Նախիջեւանի պատկանելության խնդրի հնարավոր արծարծումը մեզ համար կարող էր եւ կարող է Բաքվի վրա ճնշում գործադրելու շատ ծանրակշիռ լծակ լինել: Ահա ինչու զգնում եմ, որ Քոչարյան-Ալիեւ վերջին հանդիպման տեղի ընտրության հարցում Ալիեւը մեր նախագահին ուղղակի թակարդը գցեց: Եթե դա այդպես չէ, ապա որն Քոչարյանին խորհուրդ կտայի հաջորդ հանդիպումներից մեկի անցկացման վայր առաջարկել Բաքվի կողմից «հայ ագրեսորների գրավյալ տարածքներ» հեշակված շրջաններից ցանկացածի ու Ադրբեջանի սահմանագլխին, տեսնենք Ալիեւը կհամաձայնի՞:

Նման կարգի հանդիպումներում մանրուքներ չկան, ամեն ինչ պետք է խորապես մտածված լինի, հակապես՝ դրանց թափուն ենթատեքստը: Թվում է, հենց այդ թափուն ենթատեքստն է այս կարգի բանակցությունների գաղտնիության, նույնիսկ՝ գերգաղտնիության առեղծվածը: Խորհրդավոր անհայտության ողով ամեն ինչ պարուրելով, բանակցող կողմերը պարզապես ձգտում են աշխարհից եւ առաջին հերթին սեփական ժողովուրդներից թաքցնել իրենց դիվանագիտական ծախողումները: Քոչարյանի եւ Ալիեւի հանդիպումներն այս առումով ամենեւին բացառություն չեն: Միակ նորությունն այս անգամ այն էր, որ նախագահ Քոչարյանը հրապարակավ խոստացավ, թե մոտ ժամանակներս մենք «ավելի մանրամասն տեղեկատվություն կտանանք»: Սա ակնարկ էր, թե հույս կա ինչ-որ կոնկրետ հանգրվանի հասնելու: Իսկ եթե դա տեղի չունենա՞: Այդ դեպքում հազիվ թե երկու ժողովուրդներին ինչ թե շատ հանգամանալից տեղեկատվություն տրվի իրենց նախագահների բանակցությունների իրական ընթացքի մասին: Չախողման մեղքը մեկը մյուսի վրա կգցեն, եւ վերջ: Եվ երկուսն էլ կխուսափեն սեփական երկրների հասարակայնության աչքում վարկաբեկվելուց, քաղաքական միավորներ կորցնելուց, ավելին, կփորձեն նոր միավորներ վաստակել՝ հրամցնելով իրենց ծեռնտու մեկնաբանություններ: Սա՛ էլ նման կարգի հանդիպումների գաղտնիության առեղծվածներից, ամենեւին ոչ երկրորդական պատճառներից մեկն է:

Գալով կոնկրետ սադարակյան հանդիպմանը, պիտի նկատեմ, որ նախագահ Քոչարյանը իզուր հարկ չհամարեց հակահարված տալ Ալիեւի այն հայտարարությանը, թե արցախյան հակամարտությունը «ծագել է տասներկու տարի առաջ»: Դա բացահայտ կեղծիք էր: Հակամարտությունը ծագել է շատ ավելի վաղ, առնվազն այն պահից, երբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվել է Ադրբեջանին եւ տասնամյակներով ենթարկվել նրա հայահալած քաղաքականությանը, այդ թվում առավել վայրագաբար՝ հենց խորհրդային շրջանում Ադրբեջանում Ալիեւի իշխանության տարիներին: Ուստի Ալիեւի դիտարկումը, թե Սադարակի նույն տարածքում ժամանակին տեղի էին ունենում «երկու ժողովուրդների բարեկամության միտինգներ», առնվազն փարիսեցիություն էր: Այդպիսի մեծադողոշ միջոցառումներ իրոք տեղի էին ունենում, եւ ոչ միայն Սադարակում, սակայն դրանք «ժողովուրդների լենինյան եղբայրության» էժանագին թմբկահարումներ էին, ոչինչ ավելի: Իրականում այդ «եղբայրության» ետեւի տակ անթեղված էին խորատելությունը, հակակրանքը, վիրավորանքը, անարդարությունների ցավը: Այլապես Խորհրդային Միության մայրամուտին ու կայսրության փլուզումից անմիջապես հետո ոչ միայն հայերն ու ադրբեջանցիները, այլեւ բոլոր մյուսները այդքան արագ դեն չէին նետի կեղծ բարեկամության դիմակներն ու չէին սկսի իրար կոկորդ կրծել: Եվ սա պետք է փաստել, եթե չենք ուզում նոր ժամանակների մեր հարաբերությունները կրկին խարսխել կեղծիքի ու փարիսեցիության վրա: Մեր միջեւ արյան գետեր են, մոռանալն անչափ դժվար է, եթե ոչ անհնար: Չխաբենք ինքներս մեզ: Առավելագույնը, որ կարող ենք ակնկալել այս փուլում, մեր միջեւ խաղաղության պահպանումն է ու վիճելի հարցերի խաղաղ լուծմանը հասնելը: Քոչարյան-Ալիեւ հանդիպումները կարեւոր են առայժմ միայն ա՛յս տեսակետից: Ընդսմին, լրջորեն է մոռանալ, որ Ալիեւի ջրին փլավ չի գցվի. նրան շատ էլ հավաս ընծայել չարժե: Շատ հավանական է, որ նա այժմ Քոչարյանի հետ անձնական հանդիպումների այս շարքն սկսել ու «ակտիվություն» է խաղում հեռագնա նպատակներով, ոչ այնքան բանակցային գործընթացի վերսկսման իրական նախադայմաններ, որքան դրա պատրանքն ստեղծելու համար: Ինչո՞ւ: Շատ պարզ, որպեսզի Ստամբուլի ԵԱՀԿ առաջիկա վեհաժողովում արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցը հատուկ քննարկման եւ այդ ընթացքում իրենց ոչ ծեռնտու հունով չընթանա: Քանզի ակնհայտ է, որ Ստամբուլի վեհաժողովը, ի տարբերություն Լիսաբոնի նախորդ վեհաժողովի, այլեւս միակողմանի ադրբեջանամետ որոշում կայացնելու միտումներ չի խթանում: Աշխարհը Լիսաբոնից հետո կամաց-կամաց հասկացել է, թե ով ով է, եւ խնդիրն այժմ այլեւս միակողմանիորեն չի ընկալվում իբրեւ «Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի տարածքային հավակնություն»: Համենայն դեպս, ԵԱՀԿ Մինսկի խմբի վերջին առաջարկությունները, որոնք հազիվ թե էական փոփոխության ենթարկվեն, վկայում են, որ խնդիրն այժմ ընկալվում է իբրեւ բռնատիրման ենթարկված արցախահայության գոյատեւման պայքար բռնատիրողի դեմ: Եվ այս դեպքում բացառված է, որ աշխարհը, հանուն Ադրբեջանի «տարածքային ամբողջականության», մահվան դատավճիռ կայացնի արցախահայության նկատմամբ՝ Ադրբեջանից չդահանջելով անվտանգության իրական երաշխիքներ: Կոսովոյի օրինակը շատ խոսուն է՝ այստեղից սերբերը վերջնականապես դուրս մղվեցին, եւ ոչ ոք իր խղճին պատասխանատվություն չի վերցնի պնդելու, թե նույնը չի սպառնա արցախահայությանը, եթե նա կրկին բռնությամբ վերաենթարկեցվի Ադրբեջանին:

Ուստի բացառված չէ, որ Ալիեւն այժմ զգուշանում է Ստամբուլի գագաթաժողովի որեւէ ծեւակերպումից, որ նշված կլինի արցախահայության անվտանգության պահանջի արդարացիությունը, ինչը կնշանակեր իր պատմական բնօրրանում հայության այդ հատվածի ինքնորոշման իրավունքի, ընդհուպ Ադրբեջանից անջատվելու իրավունքի ընդունում: Այս դեպքում Ալիեւին ծեռնտու կլիներ, եթե հարցն ընդհանրապես չքննարկվեր կամ ընդունվեր ոչինչ չասող մի բանաձեւ, ըստ որի վեհաժողովը ընդամենը ողջուներ «խաղաղ լուծում գտնելու երկու նախագահների ջանքերը»: Դա Ադրբեջանին հնարավորություն կտար հարցի ավելի խոր քննարկումը տեղափոխել առնվազն երեք տարով, մինչեւ նոր վեհաժողով: Ալիեւի այս թափուն դիտավորությունը նույնպես կարող է լինել երկու նախագահների հանդիպումների գաղտնիության առեղծվածներից մեկը: Եվ սրանից, ըստ իս, հարկ է զգուշանալ: Իսկ դրա լավագույն միջոցը կամ միջոցներից մեկը կարող է լինել երկու նախագահների հանդիպումների գաղտնիության վարագույրի գոնե որոշակի բարձրացումը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ազգային

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքականության ծանծաղուտները

Դեռ մի քանի ամիս առաջ Հայաստանում կարելի էր հանդիպել ոչ միայն այնպիսի մարդկանց, որոնք անվերապահորեն հավատում էին փոփոխություններին հասարակական, քաղաքական, պետական, տնտեսական, հոգեբոր, մշակութային եւ բարոյական ոլորտներում: Անշուշտ, փոփոխությունների առաջին քայլերը պիտի փչեին գարնան վերջին օրը մայիսի 30-ի խորհրդարանական ընտրություններից հետո:

Որոշակի ավանդույթներ, կայացած պետական համակարգ ունեցող երկրներում (անկախ կառավարման համակարգից) ընտրությունները տվյալ երկրի կյանքում վճռորոշ նշանակություն չեն ունենում: Հայաստանը չունի կայացած պետական համակարգ, ժողովրդավարական ինստիտուտներ, գործող հակակշիռներ, որպես պետական համակարգ ավելի շուտ չի կայացել, քան հակառակը, ուստիեւ յուրաքանչյուր ընտրություն վճռորոշ նշանակություն է ունենում հանրապետության կյանքում:

Ընտրություններից հետո ծեւավորված խորհրդարանը, որը կազմավորվեց հասարակական, քաղաքական, պետական ու տնտեսական կյանքի ապականման արդյունքում, համալրում է վարկաբեկված պետական ինստիտուտների շարքն: Պետական կյանքում ոչինչ անհետեւանք չի անցնում, իսկ հասարակական գործընթացների ապականումը բարդ հետեւանքներ է ունենում խաթարելով ազգի բարոյական, հոգեբանական նկարագիրը, գոցելով հասարակության առաջընթացի ու բնականոն զարգացման դռները:

Այսօր, ՀՀ նախագահի վերջին ընտրություններից 1,5 տարի անց, խորհրդարանական ընտրություններից 4 ամիս եւ կառավարության ծեւավորումից 3 ամիս հետո Հայաստանում գրեթե չեմ գտնի մարդկանց, ովքեր հավատում են որեւէ փոփոխության: Ծանոթներիցս մեկը, որը երբեւէ անտարբեր չի եղել որեւէ հասարակական, քաղաքական գործընթացի հանդեպ, որը 1998-ին քվեարկել էր Ռոբերտ Քոչարյանի օգտին, այս ընտրություններում ողջ ընտանիքով «Միասնության» օգտին, որի ընտանիքի անդամները չգիտեն, ինչ է գործազրկությունն ու անապահովությունը, այդ մարդը վերջերս իր բազմանդամ ընտանիքին ճանապարհեց արտասահման, իսկ ինքը հետաձգեց իր մեկնումը՝ տունը վաճառելու համար: Իմ հորդորներին ի պատասխան, թե տունդ գոնե մի վաճառիր, կարող է վերադառնալ, նա ասաց. «Անիմաստ է, Հայաստանն ապագա չունի»:

Այս նախադասությունը նույն ծեւակերպմամբ ես լսեցի մայիսի 30-ի գիշերը իմ երիտասարդ քիմակիցներից մեկից, որը Երեւանի կենտրոնի ընտրատարածքներից մեկում անհավասար պայքար էր մղում անօրինականությունների ու անպատժելիության դեմ: Համահայկական խորհրդաժողովի օրերին Մոսկվայի իմ գործընկերներից մեկը հարցում էր անցկացնում խորհրդաժողովին ներկա սփյուռքահայերի շրջանում, թե ո՞ր երկրում կուզենայիք ապրել, բացի այն երկրից, ուր ապրում եք: Հարցվողները նշել էին տարբեր երկրներ, անգամ Թուրքիա, սակայն նրանցից եւ ոչ մեկը չէր նշել Հայաստանը:

Եվ անսպասելի չէ, որ այսօր Հայաստանը լքում են եւ նրանք, ովքեր վստահել են այս իշխանություններին, եւ նրանք, ովքեր հույսեր են կապել փոփոխությունների հետ, որոնք իրականացնելու էին բնավ էլ ոչ նախկինները կամ ներկաները: Համատարած հուսահատության այս փոթորիկը մեկ սգբնաղբյուր ունի՝ ընտրությունները: Ոչ ոք միամիտ չէր եւ չէր մտածում, որ 3-4 ամիս հետո սոցիալական լարվածությունը թուլանալու է, որ գոնե տանելի կենսական պայմաններ են ստեղծվելու: Բոլորն էին հասկանում, որ ոչ նորանշանակ կաբինետի 100 օրից էր սկսվելու բարեկեցությունը, ոչ էլ այդ օրվանից հետո փակվելու էին կոռուպցիայի ու կաշառակերության ճանապարհները: Իշխանություններին տրված էր ոչ թե վստահության կամ սխալվելու 100-օրյա ժամկետ, այլ մեկօրյա մայիսի 30-ին սկսվում եւ ավարտվում էր այդ ժամկետը:

Իշխանությունները, որոնք այս կամ այն կերպ փորձում են ժխտել կամ արդարացնել արտագաղթը, մոռանում են, որ այսօր Հայաստանից հեռանում են նրանք, ովքեր Հայաստանը չլքեցին մինչեւ անգամ դաժանագույն ձմռան տարիներին: Իսկ հետընտրական գործընթացին հաջորդած կադրային քաղաքականությունը մեկ անգամ եւս վկայեց, որ դյուրահավատ են բոլոր նրանք, ովքեր կարող էին դեռ երեկ հույսեր կապել գործող իշխանական համակարգի հետ: Կաբինետում գոյություն ունեցող 1, 2, 3 մարդիկ, ովքեր հասարակության աչքում դրական համարում ունեն, արդեն իսկ վտանգել են իրենց կարիերան, քանի որ ընդհանուր պետական-քաղաքական համակարգում նրանք օտարվածների են նմանվում:

Դեռ մի քանի օր առաջ ԱՄՆ-ից նոր վերադարձած վարչապետը նկատեց, թե որպես հայ մարդ ու ՀՀ վարչապետ, ինքը շատ մտահոգ էր, որ ԱՄՆ-ում հանդիպումների ընթացքում Հայաստանում ներդրումների համար երեք սպառնալիքներից մեկը համարվում էր կոռուպցիայի ծավալները: Ինձ անհասկանալի մնաց, թե վարչապետը մտահոգ էր ԱՄՆ-ում այդ հարցի արծարծումի՞ց, թե կոռուպցիայի անխախտելի ծավալներից: Առնվազն անհասկանալի է, որ բացահայտ ու համատարած ընտրակաշառքի պայմաններում, ընտրակաշառք, որ ոչ միայն տրվում էր ընտրողներին, այլեւ, մեղմ ասած, որանից անմասն չէին պետական շատ պաշտոնյաներ, երբ կադրային քաղաքականության մեջ առաջ են քաշվում մարդիկ, ովքեր հասարակությանը հայտնի են որպես պրոֆեսիոնալ կաշառակերներ, ահա այս պայմաններում վարչապետին կոռուպցիայի երեւույթները նոր են մտահոգում:

Ներկա քաղաքական դաշտի ընդարմացման պայմաններում, ընդարմացում, որը հետեւանք է նույն դաշտի ապականման ու կաշառվածության, քաղաքականության ծանծաղուտները ավելի ու ավելի են տեսանելի դառնում: Այն, ինչ առաջարկվել է ընդդիմադիր կամ իշխանամետ ուժերին, համագործակցություն չէ, այլ կաշառվածության յուրօրինակ դրսեւորում: Գործող քաղաքական ուժերը ապագա չունեն եւ չեն ունենա այնքան ժամանակ, քանի դեռ նրանցում ի զորու չեն ի հայտ գալ չվարկաբեկված քաղաքական նոր դեմքեր, որոնց սակայն դեռ երկար հետաքննելու է կուսակցության վերնախավի մարտնչող հարմարվողականությունը: Այս ընտրություններով ավարտվեց քաղաքական դաշտում դեռ երեկ աշխույժ գործող քաղաքական ուժերի ապագան:

Այս ընտրություններով հարցականի տակ դրվեց նաեւ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի քաղաքական ապագան: Բաց թողնելով ընտրությունների օրինական անցկացման դեկը, նախագահը գիտակցաբար թե անգիտակցաբար այդ դեկը հանձնեց այն ուժերին, ովքեր վաղը կամ մյուս օրը դառնալու են նախագահական վաղաժամկետ նոր ընտրությունների անցկացման շեփորահարները: Եվ Հայաստանում նոր հազարամյակի շեմին ավարտվելու են նաեւ գաղափարախոսությունների միջեւ մղվող վերջին թույլ, անարի մարտերը:

Գործող կուսակցությունները կաթվածահար են, եւ արքունության մեթոդներով: Այսպես, նախ, սպանելով վերջին հույսը՝ ընտրություններով փոխելու երկրի քաղաքական իշխանությունը, ապա այս հուսահատությունից քաղաքական ուժերին եւ հասարակության առողջ հատվածին չխենթացնելու համար առաջարկում են մասամբ սողոսկել իշխանական համակարգ, եւ առավել հաջողում են նրանք, ովքեր ավելի արագ եւ հիմնավոր են հասցնում աղականվել: Սինչեւ անգամ կոմպրոմատների ինստիտուտը այսօր կարող է աշխատել նաեւ նրանց դեմ, ովքեր երեկ դեռ ընդդիմության ճամբարում էին՝ մաքուր ու չվարկաբեկված:

Ժողովրդավարության աննախադեպ նահանջը լուրջ սպառնալիք է նաեւ Հայաստանի արտաքին քաղաքական վարկին, որն առանց այն էլ տարեցտարի ավելի ու ավելի մտահոգիչ չափաբաժիններ է ընդունում: Ժողովրդավարության նահանջը ամեն պահ կարող է փակուղի տանել նաեւ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը: Հայաստանի ներքին քաղաքականությունը վտանգում է նաեւ սփյուռքի հետ բնականոն, գործուն փոխհարաբերությունների հաստատումը: Ժողովրդավարության բացակայությունը նպաստում է ներկա կիսաֆեոդալական տնտեսակարգի ամրակայմանը: Ելքը ստեղծված իրավիճակից մեկն է՝ ազատ ընտրական համակարգի կայացումը: Հայաստանի ապագան դեռ տեւական ժամանակահատված շարունակելու են որոշել ընտրությունների անցկացման մեթոդները:

Ազատ ընտրությունը հասարակական-քաղաքական շրջանակների քմահաճույքը չէ, այլ Հայաստանի զարգացման գրավականը: Քանի դեռ Հայաստանում ընտրությունները անցկացվում են տարաբնույթ աճպարարություններով, ընտրակաշառքներով, զանգվածային ընտրախախտումներով, իշխանությունների ուղղակի միջամտությամբ, ՀՀ քաղաքացիները վստահություն չեն ունենա երկրի վաղվա օրվա հանդեպ: Ժողովրդավարությունը Հայաստանում այլընտրանք չունի:

Հայաստան-սփյուռք խորհրդաժողովում ունեցած ելույթում ՀՀ նախագահը Հայաստանի առաջնահերթությունները թվարկելիս չհիշատակեց ժողովրդավարության հաստատումը:

Սակայն եթե Հայաստանում մի քանի տասնյակ մարդիկ, ովքեր իշխանություն ունեն կամ իշխանամերձ շրջանակներում են, չեն ուզում կամ թույլ չեն տալիս, որ Հայաստանը դուրս գա ժողովրդավարության ուղի, դա բնավ չի նշանակում, թե այդ մարդիկ կարող են արգելակել ժողովրդավարության հաստատումը Հայաստանում: Եթե անգամ նրանք որոշեն գլխատել ժողովրդավարության վերջին նշույլները, դա բնավ չի նշանակում, որ նրանք կարող են անվերջ հաջողել: Եվ այնտեղ, որտեղ վերջանում են հին քաղաքականության ծանծաղուտները, սկսվում են հասարակական գործընթացների, հասարակության ապաքինումը եւ նոր քաղաքականության ոռնակոխ չարված ափերը:

Այդ ափերի որոնումը դառնում է օրախնդիր, դառնում է նրանց խնդիրը, ում համար ժողովրդավարությունը երկրի առաջնահերթությունների շարքում է:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՑԱԽ

Խոսում է... Չի՛ խոսում ռադիոն

Արդեն մեկ տարի է, ինչ ԼՂՀ-ում դադարեցվել է գծային ռադիոյի աշխատանքը: Դրան փոխարինած եթերային ռադիոհաղորդումները տակայն էլեր են հասու, թեպետ կապի ծառայությունների գծով արտոնություններից օգտվող Ստեփանակերտի ռադիոցանցի նախկին բաժանորդներին անվճար տրամադրվել է 2000 եթերային ռադիոընդունիչ:

Արցախում լարային ռադիոցանցը ավելի քան կեսդարյա վաղեմություն ունի: Նախկինում գործում էին 16 ռադիոհանգույցներ՝ շուրջ 500 կմ ընդհանուր երկարության գծային ցանցով եւ 30000 բաժանորդներով: Տարիների ընթացքում մեծ չափով վնասվել էր կայանային եւ գծային տնտեսությունը: Համեմատաբար բարվոք վիճակում էին մնացել Ստեփանակերտի եւ Մարտունու շրջկենտրոնի ռադիոհանգույցները: Հանրապետության բնակավայրերում ռադիոցանցը վերականգնելու համար պահանջվում էր վերանորոգել կամ կառուցել 300 կմ-ից ավելի օդային ռադիոգծեր, տեղադրել եւ մոնտաժել 14 ռադիոհանգույցներ: Այդ եւ հարակից աշխատանքները մեծ գումարներ էին պահանջում: «Արցախկապ» ՊՓԲԸ-ն նախընտրեց էժան ու շահավետ տարբերակը՝ եթերային ռադիոհաղորդումներին անցնելը: Այսպես, ԼՂՀ-ի տարածքում տեղադրված 250 վատտ հզորությամբ 5 ռադիոհաղորդակներն ի վիճակի են ապահովելու ամբողջ հանրապետությունը եթերային ռադիոհաղորդումներով: Մեկ հաղորդակը համապարփակ ծախսերով արժե 6000 դոլար, իսկ դա կազմում է 3,5 կմ օդային գծի գին, ավելացրած դրան, որ եթերային ռադիոցանցի ընթացիկ ծախսերը տասնյակ անգամ փոքր են: Շահավետությունն իրոք առկա է:

Թվում է, հնարավոր է մայրաքաղաքի գծային ռադիոցանցը, որը պատերազմի հետեւանքով փլուզ էր վնասվել, վերականգնել ու գործարկել: Սակայն «Արցախկապում» հրաժարվեցին այդ մտքից այն պարզ պատճառաբանությամբ, որ լարային ռադիոյի ինչպես կայանային, այնպես էլ գծային տնտեսության ոլորտները սպառման եզրին են, ուստի անխուսափելի են լրացուցիչ կապիտալ ներդրումները:

Մեկնաբանելով խնդրո առարկան, «Արցախկապ» ՊՓԲԸ գործադիր տնօրեն Ռոբերտ Մկրտչյանը նշեց, որ Ստեփանակերտում օդային ռադիոգծերը անհրաժեշտ է փոխարինել ստորգետնյա գծերով, որը տնտեսապես շահավետ չէ: Բացի այդ, Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես նաեւ այլ երկրներում, այլեւս հզոր ուժեղացուցիչներ չեն արտադրվում, իսկ փոքր հզորության ուժեղացուցիչներ տեղադրելու համար պետք է ավելացնել ռադիոհանգույցների քանակը: Կապի համակարգի ընկերություններն իրենց ֆինանսական սուղ միջոցներով չեն կարող նման շռայլումներ թույլ տալ, եւ հետեւաբար, ամենահարմարը եղել ու մնում է եթերային ռադիոյի տարբերակը:

Խնդրի դրական լուծման միակ հնարավոր ծեւը Ռ. Մկրտչյանը համարեց գործարար մարդկանց միջամտությունը, որոնց նյութական աջակցությամբ կարելի է վերանորոգել գծային ռադիոցանցի պահպանված հատվածները, տեղադրել փոքր հզորության ուժեղացուցիչներ եւ, ընդունելով ազդանշանը եթերից, վերահաղորդել ռադիոծրագիրը տվյալ քաղաքամասի կամ բնակավայրի գծային ցանցով: Իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ կապի համապատասխան ընկերության թույլտվությունը, լիցենզիա եւ, ինչ խոսք, նաեւ մուծել համապատասխան գումար:

Կգտնվե՞ն «բարի հեռներ», դա ժամանակի հարց է: Բայց որ առաջիկայում ռադիոլսողների թիվը չի ավելանա Արցախում, կասկածի ենթակա չէ, քանզի էլեր գրպանն է ի զորու գնել եթերային ռադիոընդունիչներ, իսկ ունենալու դեպքում՝ անհրաժեշտ քանակությամբ մարտկոցներ:

ԳԵՎ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՅՈՒՆԵՍԿՕ

Կատաղի պայքար տնօրենի պաշտոնի համար

Հոկտեմբերի կեսերին լրանում է Յունեսկոյի գլխավոր տնօրեն Իսդանացի Ֆեդերիկո Մայորի պաշտոնավարության երկրորդ ժամկետը: Ուստի ներկայումս կատաղի պայքար է ծավալվել Փարիզում գործող այդ միջազգային խոշոր կազմակերպության գլխավոր տնօրենի պաշտոնի համար: Մինչեւ օրս առաջադրված 11 թեկնածուներից 3-ը համարվում են գլխավոր հավակնորդներ: Դրանք են Փարիզում Ճապոնիայի դեսպան Կոյիշիրո Մացուուրան, Յունեսկոյում Սաուդյան Արաբիայի դեսպան Ղազի Ալգոսաիբին եւ Համաշխարհային բանկի փոխնախագահ Իսմայիլ Սարագելդինը: Իսկ ամենափոքր հնարավորություններն ունեն ավստրալացի Գարեթ Էվանսը եւ հունգարացի Պալ Պասակին:

Յունեսկոն ավանդաբար համարվում է բյուրոկրատական կազմակերպություն, որի գործունեությունը սովորաբար ողողված է եւ որտեղ զանազան ճնշումները, գաղտնի գործարքները եւ նվիրատվությունները սովորական երեւույթ են դարձել: Հավակնորդ երկրներից յուրաքանչյուրն ամեն ջանք գործադրում է իր թեկնածուին առաջ մղելու համար: «Յունեսկոն մեզ համար գրեթե նույնքան կարեւոր է, որքան ՄԱԿ-ը, քանզի սառը պատերազմի տարիներից ի վեր մշակութային հարաբերություններն առաջնային են դարձել», պարզաբանում է ճապոնացի դիվանագետներից մեկը: «Պուեն» հանդեսը նշում է, որ Ճապոնիան բացի խոշոր կազմակերպության գլխավոր տնօրենի համար: Մինչեւ օրս առաջադրված 11 թեկնածուներից 3-ը համարվում են գլխավոր հավակնորդներ: Դրանք են Փարիզում Ճապոնիայի դեսպան Կոյիշիրո Մացուուրան, Յունեսկոյում Սաուդյան Արաբիայի դեսպան Ղազի Ալգոսաիբին եւ Համաշխարհային բանկի փոխնախագահ Իսմայիլ Սարագելդինը: Իսկ ամենափոքր հնարավորություններն ունեն ավստրալացի Գարեթ Էվանսը եւ հունգարացի Պալ Պասակին:

Յունեսկոն ավանդաբար համարվում է բյուրոկրատական կազմակերպություն, որի գործունեությունը սովորաբար ողողված է եւ որտեղ զանազան ճնշումները, գաղտնի գործարքները եւ նվիրատվությունները սովորական երեւույթ են դարձել: Հավակնորդ երկրներից յուրաքանչյուրն ամեն ջանք գործադրում է իր թեկնածուին առաջ մղելու համար: «Յունեսկոն մեզ համար գրեթե

եւ Սաուդյան Արաբիան Յունեսկոյի բյուջեի պակասորդը փակելու նպատակով խոշոր նվիրվածություններ են խոստացել, եթե ընտրվի իրենց թեկնածուն: Ընտրությունը կատարելու են Յունեսկոյի գործադիր խորհրդի 58 անդամները ընտրական 5 փուլերի ընթացքում, ըստ որում ընտրություններն անցկացվելու են գաղտնի քվեարկությամբ: Ավանդույթի համաձայն, գործադիր խորհրդի ընտրությունը հաստատվում է Յունեսկոյի անդամ 186 երկրների ընդհանուր խորհրդաժողովում:

Անշուշտ, թեկնածուները միեւնույն հնարավորությունները չունեն: Եգիպտոսի ներկայացուցիչ Իսմայիլ Սարագելդինը բարձրակարգ գիտնական է, բայց միջոցների սղության պատճառով թեկնածու է առաջադրվել Շվեդիայի կողմից, որը հոգում է նրա ընտրական չափավոր ծախսերը: Սարագելդինի առավելությունը նրա օգտին 43 Նոբելյան մրցանակակիրների ստորագրած հանրագիրն է, ինչպես նաեւ որոշ երկրների ղեկավարների դրական կարծիքը: Սաուդցի Ղազի Ալգոսաիբիի թեկնածությունը պաշտպանում են արաբական երկրները, բայց նրա հանդեպ վաս են տրամադրված արեւմուտքցիները, ինչպես նաեւ Սահարայից հարավ ընկած աֆրիկյան պետությունները: Աֆրիկացի ղեկավարներից շատերն ավելորդ են համարում Սաուդյան Արաբիայի վիթխարի ծախսերը, քանի որ այդ երկիրը մինչեւ օրս նույնիսկ չի ստորագրել Մարդու իրավունքների ընդհանուր հռչակագիրը եւ ոտնահարում է կանանց իրավունքները:

Յունեսկոյի գլխավոր տնօրենի պաշտոնի ամենահավանական թեկնածուն փաստորեն ճապոնացի Կոյիշիրո Մացուուրան է, որի օգտին արտահայտվում են Սահարայից հարավ ընկած աֆրիկյան 14 պետություններից 12-ը, ինչպես նաեւ Ֆրանսիան: Իր թեկնածուի ընտրության դեպքում Ճապոնիան ստիպված կլինի տարեկան մոտ 200 մլն դոլար հավելյալ օգնություն հատկացնել աֆրիկյան երկրների զարգացմանը եւ Աֆրիկայում զարգացման բանկ հիմնել Վերականգնման ու զարգացման եվրոպական բանկի օրինակով:

Պ. Ջ.

ՄԱՍԱՀՈՒՍԵԹՍ

Ցեղասպանության ժխտումը հանված է ուսումնական ծրագրերից

Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի, Բոստոնից դեմոկրատ սենատոր Սթիվն Տոլմանը հայտարարել է, որ Մասաչուսեթսի կրթության վարչությունը վերացնելու է համակարգչային ցանցերի ցուցակներում տեղ գտած Հայկական ցեղասպանության թուրքական հերքումները, որոնք օգտագործվում էին մարդու իրավունքների եւ ցեղասպանության առարկաների դասավանդման ծրագրերը կազմելիս: 1996-ին Տոլմանն ու նրա եղբայրը նախաձեռնեցին նման մի օրինագիծ ստեղծել, որից այդ առարկաները դասավանդողները կկարողանային օգտվել: 1998-ին օրինագիծը դարձավ օրենք եւ մտավ ուժի մեջ: Օգտվելով առիթից, թուրքական կողմն իր հերքումային «գրականությունը» առաջարկեց եւ մտցրեց ցանցի ցուցակներում:

Ողջունելով կրթության վարչության ներկա որոշումը՝ սենատոր Տոլմանն օրինագիծը «կարեւոր քայլ է համարել պատմության խեղաթյուրումները պարզաբանելու եւ Հայկական ցեղասպանության շահերի հիշատակը վառ պահելու գործում»: Նա շնորհակալություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր օգնեցին նման ուղղում մտցնել ցուցակում եւ մեծապես գնահատել կրթության վարչության անդամների ջանքերն՝ «այդ գործն իր արդարացի ավարտին» հասցնելու համար: Տոլմանը, որը գլխավոր մղիչ ուժն էր այդ հարցում, սերտորեն համագործակցել է նահանգի կառավարիչ Շելուցին: Կառավարության կրթության գծով խորհրդական Մայքլ Սենտենսն ասել է, որ վերամշակված ցուցակից զոհ են իրենք եւ պատասխանելով «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի թղթակցի հարցին, թե արդյոք թուրքերը նորանոր քայլեր չե՞ն ձեռնարկի, նշել է, որ նրանց ոչինչ չի հաջողվի անել «ներկա կառավարչի իշխանության օրոք»:

Օրինագծի, այնուհետեւ նաեւ ընդունված օրենքի նպատակն էր ցեղասպանության վերաբերյալ գրականության ցուցակ պատրաստել եւ ոչ թե ենթարկել ցեղասպանության կատարված-չկատարված լինելու հարցը, բացատրել է նա: Մենք չենք կարող գիտակցորեն թույլ տալ, որ հարցականի տակ դրվի կատարված մի իրողություն, եզրակացրել է նա:

Հ. Ս.

Որտե՞ղ է կանգ առնելու հորդանանա-իսրայելական կապերի վաստակումը

Հորդանանա-իսրայելական կապերը կտրականապես սկսեցին վատթարանալ, երբ հոկտեմբերի 9-ին հրեա վերաբնակները հարձակվեցին Հորդանանի խորհրդարանի անդամների վրա՝ պաղեստինյան Հեբրոն քաղաքում: Միջադեպը տեղի է ունեցել այն պահին, երբ արաբ օրենսդիրները փորձում էին մտնել Աբրահամյան սրբավայր՝ աղոթելու: Հատկանշական է նաեւ, որ հրեա ծայրահեղականների ոտնձգությունները կատարվել են ի տես իսրայելցի ոստիկանների, որոնք արգելելու փոխարեն օգնել են իրականացնողներին:

Սա այս պատճառով Ամմանը Թել Ավիվին խնդրեց առկախել հոկտեմբերի 13-ին նախատեսված Իսրայելի արդյունաբերության եւ առեւտրի նախարարի այցը Հորդանան: Մյուս կողմից, թագավորության արտգործնախարարությունը Ամմանում Իսրայելի դեսպանից բացատրություն է պահանջել: Միեւնույն ժամանակ Թել Ավիվում Հորդանանի դեսպանը եբրայական կառավարությանը պաշտոնական բողոքագիր է ներկայացրել: Բայց ամենավտանգավոր քայլն այն է, որ Հորդանանի խորհրդարանն իր կառավարությանը հորդորել է ետ կանչել դեսպանին Թել Ավիվից եւ սպառնացել, որ նոյեմբերի 1-ի նստաշրջանում ընդունելու է մի օրենք՝ Իսրայելի հետ խաղաղության պայմանագիրը առկախելու մասին:

Նշենք, որ «Աշխատանք» կուսակցության ղեկավար Եհուդ Բարակի վարչապետ ընտրվելուց հետո 2 երկրների հարաբերություններում բարելավման միտում էր նկատվում: Նախորդ 3 տարիներին դրանք լարված էին նախկին վարչապետ Նաթանյահուի վարած անզիջում եւ կարծր քաղաքականության պատճառով:

Ուշագրավ է, որ վերոհիշյալ իրադարձությունների ընթացքում Հորդանանի թագավոր Աբդուլլան 2-ը շարունակում է իր պաշտոնական այցը Միացյալ Նահանգներում: Այդ իսկ պատճառով դժվար է ասել, թե նա որքանով է համամիտ Ամմանի ձեռնարկած քայլերին, որոնց վերաբերյալ դյուրությամբ չի կողմնորոշվելու, երբ վերադառնա հայրենիք, հատկապես որ 1994 թ. հորդանանա-իսրայելական հաշտության պայմանագիրը կնքվել էր Վաշինգտոնի օրհնությամբ: Իսկ Ամմանի եւ Թել Ավիվի հարաբերություններում արձանագրվող որեւէ նահանջ, այն էլ վտանգավոր, առաջին հերթին հարվածելու է ԱՄՆ-ի միջնարեւելյան քաղաքականությանը:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՒՍԱԵՍՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Հելմուտ Քոլի ժողովրդականությունը կրկին բարձր է

«Սա կանցլերը», հիացմունքով ասում է Հելմուտ Քոլը: Ճիշտ է, անցյալ տարվա ընտրություններում Քոլը 16-ամյա կանցլերությունից հետո իր պաշտոնը զիջեց Գերհարդ Շրյոդերին եւ Բունդեսթագում սկսեց շարքային պատգամավորի տեղ զբաղեցնել, բայց այսօր նա վերստին մեծ ժողովրդականություն է վայելում: Վերջին մեկ տարում Քոլն ապրում էր համեստ եւ անաղմուկ մերժելով անգամ հուշեր գրելու առաջարկները: Բայց երբ Գերհարդ Շրյոդերի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը մի շարք ընտրական անհաջողություններ կրեց, գերմանացիները հանկարծ կարոտով հիշեցին Հելմուտ Քոլին, որին իրենք անցյալ տարի ենթադրել էին պահանջելով սերնդափոխություն:

Գերմանիայում անցկացված վերջին հարցումների համաձայն, Հելմուտ Քոլը ներկայումս հեղինակավոր քաղաքական գործիչների մեջ երրորդ տեղն է զբաղեցնում «կանաչ» արտգործնախարար Յոշկա Ֆիշերից եւ Բունդեսթագում քրիստոնեա-դեմոկրատների առաջնորդ Վոլֆգանգ

վում է Հելմուտ Քոլը: Ճիշտ է, անցյալ տարվա ընտրություններում Քոլը 16-ամյա կանցլերությունից հետո իր պաշտոնը զիջեց Գերհարդ Շրյոդերին եւ Բունդեսթագում սկսեց շարքային պատգամավորի տեղ զբաղեցնել, բայց այսօր նա վերստին մեծ ժողովրդականություն է վայելում: Վերջին մեկ տարում Քոլն ապրում էր համեստ եւ անաղմուկ մերժելով անգամ հուշեր գրելու առաջարկները: Բայց երբ Գերհարդ Շրյոդերի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը մի շարք ընտրական անհաջողություններ կրեց, գերմանացիները հանկարծ կարոտով հիշեցին Հելմուտ Քոլին, որին իրենք անցյալ տարի ենթադրել էին պահանջելով սերնդափոխություն:

Գերմանիայում անցկացված վերջին հարցումների համաձայն, Հելմուտ Քոլը ներկայումս հեղինակավոր քաղաքական գործիչների մեջ երրորդ տեղն է զբաղեցնում «կանաչ»

Շյոբլեից հետո: Սեպտեմբերին Մոսկվայում Ռաիսա Գորբաչովայի թաղման արարողության ժամանակ Գերմանիայի ներկայացուցիչը փաստորեն Հելմուտ Քոլն էր, որի ելույթը ցուցադրվեց հեռուստատեսությամբ: «Պուեն» հանդեսի բեռլինյան թղթակիցը դա տպավորիչ փոխվրեժ է համարում Քոլի համար, որի ներկայությունը դեռ վերջերս անցանկալի էր համարվում քրիստոնեա-դեմոկրատների նախընտրական հանդիպումներում, քանզի կուսակիցները վախենում էին կորցնել իրենց քվեները:

Անցյալ տարվա ընտրություններում պարտություն կրելու հաջորդ օրն իսկ Հելմուտ Քոլը հեգնախառն հայտարարեց, թե ուրախ է, որ պատգամավորի աթոռին հանգիստ նստած հետեւելու է, թե ուրիշներն ինչպես են լուծում բարդ խնդիրները: Բայց այսօր նա կրկին կորցրել է հանգիստը:

Չիշոլինան գաղտնի գործակալ է եղել

Նախկին պոռնոաստղ եւ նախկին եվրապատգամավոր իտալուհի Չիչոլինան անձամբ է խոստովանել, որ ինքը երեք տարի շարունակ Հունգարիայի գաղտնի ծառայությունների գործակալ է եղել:

Չիլիում զինվորականներն այլեւս անձեռնմխելի չեն

Մեծ Բրիտանիայի իշխանություններն օրերս որոշեցին Չիլիի նախկին բռնատեր Աուգուստո Պինոչետին հանձնել Իսպանիային: Բայց դրանից առաջ արդեն դրական տեղաշարժեր էին սկսվել չիլիական բանակում: Սեպտեմբերին Չիլիում տեղի ունեցավ մի իրադարձություն, որը դեռ մեկ տարի առաջ անհերետակայելի կլիներ. մի խումբ զինվորականներ Սանտյագոյում նախկին բռնատեսության զոհերի փաստաբանների, կառավարության եւ եկեղեցու ներկայացուցիչների հետ հանդիպեցին անհետ կորած բանտարկյալների ծնողների դիմումը պարզելու նպատակով: Դա նշանակում է, որ զինվորականների դիրքորոշման մեջ զգալի փոփոխություն է կատարվել, քանզի մինչեւ վերջերս բանակն ըստ էության ժխտում էր 1973-1990 թթ. զինվորական վարչակարգի օրոք կատարվածների կիրառման փաստերը:

Չիլիի օդուժի եւ ծովուժի բարձրաստիճան պատասխանատուների դիրքորոշումը փոխվել էր էլ ավելի վաղ: Արդեն այս տարվա գարնանը ծովային գլխավոր հրամանատար ծովակալ Խորխե Արանսիբիան ընդունել էր, որ անհետ կորածների ընտանիքներն «օրինական կարգով իրավասու են իմանալու ճշմարտությունը»:

Չնայած չիլիացի շատ գեներալների մեծ մասը պատասխանատու է Պինոչետին, երիտասարդ սպաները քաղաքացիական հասարակությանը մերձենալու փորձեր են անում:

«Պուեն» հանդեսը նշում է, որ զինվորականների նոր սերունդը ձգտում է վերականգնել քաղաքական իշխանությունների հանդեպ զինվորականների հավատարմության ավանդույթը, որից Պինոչետը հրաժարվել էր 1973 թ. սեպտեմբերին՝ չիլիական ժողովրդավարության 160 տարիներից հետո:

Չիլիացի դատավորներն իրենց հերթին անհանգստացնում են բանակային վերնախավի մի շարք ներկայացուցիչների: Արդեն բանտարկված են նախկին քաղաքական ոստիկանության ոճիրների մասնակից հինգ գեներալներ: Դատաքննություն է սկսվել 25 ուրիշ սպաների գործով: Տասնյակ զինվորականներ դատարան են կանչվել ցուցմունքներ տալու: Չիլիում զինվորականները փաստորեն զրկվել են անձեռնմխելիությունից, ըստ որում դրական տեղաշարժերն սկսվել են Պինոչետի ձերբակալման պահից:

Պ. Ջ.

digitised by A.R.A.R.@

Դրսում բարեկեցիկ ապրել կարող ենք, բայց նման հայ երեխաներ ունենալ չենք կարող

Ասում է բազմավաստակ կրթական գործիչ Երվանդ Բաբայանը

Երեկ Խնկո-Ապոր հանրապետական գրադարանի դահլիճում տեղի ունեցավ սփյուռքահայ մտավորական, բազմավաստակ ուսուցիչ, կրթության երախտավոր Երվանդ Բաբայանի մեծարանքի երեկոն:

Երվանդ Բաբայանը ծնվել է 1913 թ., Այնթապում: 20 տարի աշխատել է Կիլիկյան վարժարանում, 32 տարի՝ Բեյրութի Թեմական վարժարանում որպես ուսուցիչ եւ տնօրեն: 1986 -ից ապրում է Լոս Անջելեսում եւ խմբագրում «Նոր Այնթապ» եռամսյան:

Միջոցառման ընթացքում մեծարանքի խոսքերով հանդես եկան նրա աշակերտները, արվեստագետներ, ովքեր հնարավորություն են ունեցել ճանաչելու պարոն Բաբայանին, տեսնելու նրա կատարած հայանվեր գործերը: Գլխավոր բանախոս՝ «Գեւորգ Մոմջյան» հիմնադրամի տնօրեն Ռոմեն Կոզմոյանը ներկայացրեց կրթական մեծավաստակ մշակին այնպես, ինչպես տեսել էր նրան Բեյրութում աշխատած տարիներին: Միլվա Կապուտիկյանը ուսուցչին նվիրեց իր վերջին՝ «Քարավանները հեռանում են» ժողովածուն: Մատենադարանի փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանը նշեց, որ 70-ական թվականներին, երբ Երվանդ Բաբայանը «Այնթապ» հայրենակցական միության ատենապետն էր, մեծ ջանքեր գործադրեց սփյուռքահայերից գումար հավաքելու եւ Նոր Այնթապ ավանում վարագույրներ եւ ժանյակներ արտադրող գործարան կառուցելու համար: Հավաքված մեկ միլիոն դոլարով կառուցված այդ գործարանը վերջին տարիներին սեփականացվել է ընդամենը հարյուր հազար դոլարով, հասցոները վաճառվել են, գործարանը չի աշխատում, ինչը, բնականաբար, հուզում է բոլորին:

Ամեն դեպքում, նա չի դադարեցրել իր հայանպաստ եւ հայրենանվեր գործունեությունը: 1983-ին Բեյրութում եւ 1989-ին Լոս Անջելեսում մեծարանքի երեկոներ են կազմակերպվել Երվանդ Բաբայանի պատվին: Այս առիթով հայոց լուսահոգի կաթողիկոս Վազգեն Ա-ի ձեռամբ նրան շնորհվել է Ս. Սահակ, Ս. Մեսրոպ շքանշանը՝ հատուկ կոնդակով:

Երեկվա մեծարման ցերեկույթի ժամանակ ներկայացվեց Երվանդ Բաբայանի «Յիշատակներու արահետներով» գիրքը, որը Լեւոն Հախվերդյանը որակեց որպես սփյուռքահայության մասին հանրագիտարանի համալրում: Գիրքը լույս է տեսել 1998-ին Լոս Անջելեսի «Արաքս» տպարանում:

Երվանդ Բաբայանը իրեն համարում է վերապրողների սերնդին պատկանող: Ինքը միշտ Հայաստանի հետ է եղել «առանց նկատի առնելու անոր պետական դրոշը»: Մեծարումներից հետո նրա պատվին ողջույն-համերգով ելույթ ունեցան «Նոր անուններ» ծրագրով հանդես եկող երեխաները: Պարոն Բաբայանը արցունքն աչքերին ասաց, որ օտար հողում բարեկեցիկ կյանք կարելի է գտնել, բայց նման հայ երեխաներ հավանաբար չեն լինի:

ՆԱԻԲԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գերասանը՝ միամտություն պետք է ունենա...

Կայացած ու չկայացած հարցազրույց

Վարդուհի Վարդերեսյան դերասանուհուն ներկայացնելու հարկ չկա. նրան ճաջ գիտեմ եւ բեմից, եւ էկրանից: Այդուհանդերձ (մանի որ թատրոն հաճախողների թիվը զգալի նվազել է) փորձենք մի քանի բառով. 1946-ին հայրենադարձվել է Բուխարեստից, ապրել Գյումրիում, խաղացել տեղի թատրոնում, այնուհետեւ հրավիրվել Սունդուկյան թատրոն, կերտել մնայուն կերպարներ թատրոնում, հեռուստատեսությունում եւ կինոյում: Հոբելյանական տարեթվի հետ չէր կապված դերասանուհու հանդիպումը մշակույթի հայկական ֆոնդում մտավորականության հետ, որոնցից յուրաքանչյուրի համար, դերասանուհու խոսքավանությամբ, պատրաստ էր ելույթ ունենալու: Իսկ հանդիպումը վերածվեց հարգանքի տուրքի եւ հաճելի երկխոսության, որ հաճախ ընդմիջվում էր դերասանուհու բեմական ելույթներով:

Պարզվեց դերասանուհուն ոչինչ չի պակասում, եւ նրան պետք չեն հոբելյաններ ու մեծարումներ, կարեւոր է, որ դրսում հասարակ մարդիկ հանդիպելիս ժպտում են: Այսօր Վարդուհի Վարդերեսյանը պատրաստում է իշխանուհու դերը՝ Չեխովի «Բալենու այգին» նոր ներկայացման մեջ (ի դեպ, հերթական փորձից չուշանալու համար հետաձգվեց բուն հարցազրույցը) եւ ինչպես միշտ՝ բեմից առաջ հուզվում:

Դերասանուհին վարպետորեն ներկայացրեց Շահան Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ» գործից մի հատված, այնուհետեւ փայլեց Նաստասիա Ֆիլիպովնայի դերում (Դոստոյեւսկի՝ «Ապուշը») լացն ու ծիծաղը միախառնած՝ ցուցադրելով խելահեղ կնոջ դրամա, իսկ Ավետիս Սիսարոնյանի «Հազրեն» անհնար էր դիտել անարցունք աչքերով, ներկայացրեց նաեւ Անուշը (Հ. Պարոնյան «Պաղտասար աղբար»), ընթերցեց Սիամանթոյի տողերից:

Դերասանուհու արվեստը բարձր գնահատեցին նկարչուհի Արմինե Կալենցը, դերասան Լեւոն Թուխիկյանը, Վլադիմիր Աբաջյանը եւ մշակույթի հայկական ֆոնդի նախագահ Արեւաս Ավագյանը:

Ու մինչ կդասարկվեր լիքը դահլիճը խնդրեցի պատասխանել «Ազգի» մի քանի հարցերի.

– Ունե՞ք նախապատվելի հեղինակ:

– Կան հեղինակներ, որոնք ինձ համար սրբություն են, նրանցից է Շահան Շահնուրը:

– Բոլոր դերասաններն ունենում են երազած դեր, ո՞րն է Ձեր երազածը:

– Հիմա կուզեի Իբսենից խաղալ: Լավ կլիներ, որ գործեր հեռուստաթատրոնը: Առաջ պոեզիայի ժամ գոյություն ուներ: Դա «Նոր հայերին» չի հեռարձակում դասելով եթերից, պետք է ենթադրել, որ հեռարձակվում են միայն մերկասրունք աղջիկներով: Կամ էլ գտել են գումար աշխատելու համար:

– Ձոնին հարազատ կերպա՞ր էր, նախընտրելի՞, թե պարտադրված:

– Մի օր, երբ Վ. Աճեմյանն առանց թակելու մտավ սենյակ (նա միշտ այդպես էր մտնում, իսկ մենք ներսում էինք, նա ուրիշ մարդ էր), ասաց, որ ես պետք է խաղամ Ձոնիի դերը... Երկու տարի տեւեց, մինչեւ կարողացա այդ դերը խաղալ (կանայք ինձ կհասկանան):

– Ի՞նչ եք զգում, երբ էկրանին տեսնում եք Ձեզ՝ երիտասարդ տարիքում:

– Շատ նորմալ եմ վերաբերվում, ապրումներ չեմ ունենում, ուրախ եմ, որ երիտասարդ ժամանակ հաճելի եմ եղել, ուրախ եմ նաեւ հիմա, որ այնքան էլ չեմ գեշացել:

– Տարիներ առաջ, երբ հարցրի՝ ժամանակից շուտ չե՞ք սկսել տատիկի դերեր խաղալ, պատասխանեցիք՝ դերասանը պետք է կարողանա ժամանակին դերը բողնել, այլապես... այժմ էլ ե՞ք այդ կարծիքին:

– Այո, իհարկե, ավելացնեմ՝ Օլգա Գուլազյանն իր լավագույն դերակատարումը տատիկինը, խաղաց 86 տարեկանում:

– Բեմից դուրս ինչո՞վ է ապրում Վ. Վարդերեսյանը:

– Տնային գործերով, հոգսերով, տանը ես կին եմ, մայր ու տատիկ:

– Իսկ ինչպե՞ս եք դիմավորում Ձեր ամուսնուն՝ Գեւորգ Աբաջյանին՝ աշխատանքից վերադառնալիս:

– Պոլսահայ մայրս ինձ հատուկ սովորեցրել է դիմավորել միշտ ոտի վրա ու շատ ջերմ:

ԳՈՀԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

ԵՐԲ ՎԱՐԱԳՈՒՅՐ ՐՃԵԼ Է

Կայարերը չեկան կայարերին դիտելու

Մեկնաբանում է Վլադիմիր Մարյանը

Սեպտեմբերի 21-ին եւ 29-ին Երեւանում, այնուհետեւ Վանաձորում ներկայացվեց Լեւոն Շանթի «Կայար» դրաման: Լոս Անջելեսի «Վարդան Աճեմյան» թատերախմբի գեղարվեստական ղեկավար Ժան Նշանյանի բեմադրությունը դեռ փետրվարին թատերական երեւույթ է համարվել ամերիկյան այս քաղաքի ոչ միայն հայ շրջանակներում: «Թատրոն» հիմնադրամի տնօրեն, ներկայացման հայաստանյան տարբերակի մասնակից Մակիչ Մարգարյանը նշեց, որ այս անգամ ամեն ինչ արվեց «Թատրոն» հիմնադրամի ջանքերով, թեեւ այն անցկացվեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի շրջանակներում: Անշուշտ, դեռ շատ է գրվելու այս ներկայացման մասին, գրելու են ճանաչված ու ինքնակոչ թատերագետները, գրվելու են երկարափետ ու խիստ մասնագիտական տրակտատներ:

Այս անգամ «Կայար»-ի բեմականացումը մեկնաբանում է գլխավոր դերակատարներից մեկը՝ Վլադիմիր Մարյանը.

– «Վարդան Աճեմյան» թատերախմբի հրավերով Գուժ Մանուկյանն ու ես փետրվար-մարտ ամիսներին եղանք Լոս Անջելեսում: Ժան Նշանյանն անչափ համարձակ մի մտահղացում էր իրականացնում՝ բեմադրության էր պատրաստում Լեւոն Շանթի «Կայարը», որի գաղափարն անչափ թանկ է ինձ համար: Մեծն Մհեր Մկրտչյանը նույնպես փորձում էր այս պիեսը բեմադրել, բայց նրա հիվանդությունը, ապա նաեւ անժամանակ մահը խանգարեցին այս ընտիր ծրագրի իրականացմանը: Մհեր Մկրտչյանի մոտ ես նախ Նիկեֆոր (առաջին կայար) էի փորձում, ապա սկսեցի աշխատել Վասիլ Լեկապենի (պալատական ներքինու) կերպարի մարմնավորման վրա: Ժան Նշանյանի եւ իմ ցանկությունները համընկան, եւ մենք Լոս Անջելեսում՝ երկու ամիս շարունակ, ամեն օր հինգ ժամ (երեկոյան ժամը 7-ից մինչեւ կեսգիշեր) աշխատում էինք: Այնպես որ, ներկայացումը հանպատրաստի չէ, շտապողականություն, առավել եւս՝ անփույթ աշխատանք չի եղել: Իմ Նիկեֆորը խիստ է, ազդու: Նա իսկապես կայար է: Բայց, ահա, տես, որ Շաֆե Թուխմանյանի ստեղծած Թեոֆանո կայարուհուն այս կայարը չի բավարարում: Նա ինքն է ստեղծում կայարեր, ոչ թե ընտրում է: Իր ողջ մտածողությամբ զորավար Օհան Գուրգենին Թեոֆանոն հասցնում է գահին: Անչափ հետաքրքիր կերպար է ստեղծել Ժան Նշանյանը Նիկեֆոր կայարին նվիրյալ Օհան Գուրգենից հասնելով մինչեւ նոր կայար Օհան Գուրգեն: Ժանը շատ զուսպ է խաղում, առնական, ձայնը տպավորիչ է, նույնիսկ արտահայտում հերոսին հատուկ մանրամասներ կան: Օհան Գուրգենը գրավում է հանդիսատեսին: Ես հատուկ ուզում եմ շեշտել Գուժ Մանուկյանի Վասիլը, որն իսկապես հայտնություն է: Վասիլ Լեկապենը բոլոր ժամանակների կայարերի սպվերն է: Նա չի ուզում նստել գահին, ոչ: Նա կայարություն է ղեկավարում առանց կայսեր ծիրանու: Լեկապենը հզոր նախանձ ունենալով տիրակալների նկատմամբ, ինքն է տիրում՝ կայարերին օգտագործելով որպես բզվան խամաճիկներ: Այ, այս իմաստով հզոր է Գուժ Մանուկյանի Վասիլը: Եվ մոռանում ես, որ նա ներքինի է, ամորձատված տղամարդ: Անչափ բարձր եմ գնահատում Ժան Նշանյանի եւ մեր սիրելի Շաֆե Թուխմանյանի խաղը: Նրանք, անշուշտ, բարձր պրոֆեսիոնալիզմ են ցուցադրում: Նույնը կարելի է ասել Ժաննա Մարյանի, Մակիչ Մարգարյանի եւ Ռոբերտ Հարությունյանի կատարած աշխատանքի մասին: Կուզեի շեշտել մի պայծառ կերպար՝ Անդոկ իշխանի դուստր Հաննային, որին անչափ ջերմ է պատկերել Լուիզա Դամբարյանը... Թող ինձանդատները դեռ իրենց հեղինակավոր խոսքն ասեն: Ես այսօր կարող եմ վստահությամբ ասել, որ «Կայար»-ի ներկայացումն իսկապես իրադարձություն է մեր թատերական կյանքում:

Վլադիմիր Մարյանի եւ Մակիչ Մարգարյանի ասածներին մեկ բան ավելացնենք. երեւանյան ներկայացումների ժամանակ, հատկապես սեպտեմբերի 29-ին, Սունդուկյանի անվան թատրոնի դահլիճը լեփլեցուն էր: Հանդիսատեսարահում կտեսնեիր մեր ժամանակի ամենածանաչված մտավորականներին, թատերական գործիչներին: Ցանկալի կլիներ, որ ներկա լինեին նաեւ իշխանավորները, գոնե այն իշխանավորները, ովքեր անմիջական կապ ունեն մշակույթի հետ: Չգիտեմ, ուրիշ մի վայրում նրանք ինչ են շահել, բայց «Կայար»-ի ներկայացմանը չլինելով շատ բան կորցրին:

Ս. Գ.

ՅՈՒՅՇԱՀԱՆԴԵՍ

Պատերազմի մասին՝ արվեստի լեզվով

Մշակույթի զարգացման բարեգործական հիմնադրամի ցուցասրահում «Ղարաբաղ-վիշտ, հավաս, երջանկություն» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը, որի հեղինակը զինվորական ֆոտոդղեակից Սվյատոսլավ Ավանեսյանն է, ներկայացրել է 182 լուսանկար, երեք բաժնով՝ «Արցախը մարտական շրջանում», «Եռապատերազմյան Արցախը» եւ նկարներ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսին (նրա այցը Արցախ 1995 թ.): Պատերազմի շրջանի լուսանկարները սեւ եւ սպիտակ գույներով են, իսկ հաղթանակած Արցախը՝ գունավոր:

Ցուցահանդեսին ներկայացրած լուսանկարները հեղինակը նվիրելու է սբ. Էջմիածնին, ԼՂՀ-ի պաշտպանության նախարարությանը, 8 նկարներ էլ «Զվարթնոց» օդանավակայանի թանգարանին՝ նրանց ցուցաբերած օգնության համար: Նկարների մի մասն էլ մնալու է Մշակույթի զարգացման բարեգործական հիմնադրամում:

ԳՈՀԱՐ ՍԱՐՈՅԱՆ

Հայաստանի պետական կամերայինը կմեկնի ԱՄՆ հյուրախաղերի

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի պետական կամերային նվագախումբը Կալիֆորնիայի «Alex Theatre» ամերիկյան կազմակերպության հրավերով հոկտեմբերի 19-ին կմեկնի ԱՄՆ՝ հյուրախաղերի: Համերգները տեղի կունենան Լոս-Անջելեսի «Alex Theatre», Սան Ֆրանցիսկոյի «Florence Gould Theatre», եւ Ֆրեզնոյի «Tower Theatre» համերգասրահներում:

Նվագախմբի 24 երաժիշտները հոկտեմբերի 16-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի հանդիսատեսին կներկայացնեն հյուրախաղային ծրագիրը, որում ընդգրկված են Մոցարտի, Բրիտենի, է. Հայրապետյանի Ա. Հարությունյանի եւ Ա. Շնիտկեի ստեղծագործությունները:

Նվագախմբի գլխավոր հովանավորն է «Վալե եւ Թամար Մանուկյան» բարեգործական հիմնադրամը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Եթե կարող ենք, ապա ինչո՞ւ ոչ

«... Մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սեւ...»: Մեծն բանաստեղծը. գրելով այս տողերը. արդյոք նկատի՞ է ունեցել Հայաստան աշխարհի ներկայիս որոշ շինությունների վիճակը: Այո. գյուղատնտեսական ակադեմիայի 4-րդ մասնաշենքի նկուղի պատերը եւս անհյուրընկալ էին՝ սեւացած. ճաքճքված եւ. ինչպես տխուր կատակեց ներկաներից մեկը. «խոնավ եղանակին անձրեւանոցով ենք պարապմունքներ անցկացնում»:

Այնուամենայնիվ. դահլիճում աշխուժությունը մեծ էր: 10-15 պատանիներ ու աղջիկներ կորեական թեքվանդո մարզաձեւն էին ներկայացնում: Մարզիչ Վարդան Շամոյանը մոտեցավ մեզ եւ սիրով համաձայնեց պատասխանել իմ հարցերին:

Վարդան Շամոյանը եւ իր սաները

– Մարզաձեւը ե՞րբ մուտք գործեց Հայաստան:

– 2000 տարվա պատմություն ունեցող թեքվանդոն Հայաստան մուտք է գործել 1988-ից: Մարզիչ էլ Արաբի Ռաշիդի շնորհիվ այս մարզաձեւը տարածվեց Հայաստանում: Նա էլ հանդիսացավ իմ ուսուցիչը:

– Ինչքա՞ն ժամանակ է, որ զբաղվում եք թեքվանդոյով:

– 1992 թվականից մինչեւ օրս մասնակցել եւ մասնակցում եմ մրցումների: Կորեական թեքվանդոյի բազմակի չեմպիոն եմ: Ստացել եմ որակավորում սեւ գոտի 3-րդ դան: Մասնակցել եմ 1995 թվականին տեղի ունեցած աշխարհի գինվորական մրցարշավին, 1997-ին աշխարհի առաջնությանը: Մարզիչ եմ աշխատում 1995-ից: Նույն թվականին էլ ստեղծվել է «ՎՍՍԿ-Սասուն» ակումբը: Այն ունի բազմաթիվ չեմպիոններ տարբեր տարիքային խմբերում: Վերջերս վերադարձանք Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացված միջազգային մրցաշարից: Մասնակցում էին ՀՀ-ի թեքվանդոյի «ՎՍՍԿ-Սասուն» ակումբի 14-17 տարեկան երիտասարդները:

– Հաջո՞ղ էին մրցելույթները:

– Այո, ունենք 4 ոսկե եւ 6 արծաթե մեդալակիրներ: Ոսկե մեդալակիրներ դարձան Հայկ Կիրակոսյանը, Տիգրան Վարդանյանը, Նվեր Կարապետյանը եւ Կարեն Սաղինյանը: Իսկ արծաթե մեդալակիրներ են Լեւոն ու Նաիրի Խաչաբեգյան եղբայրները, Կարեն Հովհաննիսյանը, Սուրեն Գեւորգյանը, Արսեն Հարությունյանը եւ Դավիթ Մուրադյանը: Իմամ Խոմեյնու անվան մրցաշարը կազմված էր 4 փուլից: Տղաները պատվով հանդես եկան թիմային մրցումներում, որտեղ գրավեցին երկրորդ տեղը:

– Պատասխան մրցումներ նախատեսվո՞ւմ են:

– Այո: Նոյեմբեր ամսին տեղի են ունենալու միջազգային թիմային մրցումներ՝ 14-17 տարեկանների խմբում:

– Պրն Շամոյան, իսկ ի՞նչ որակավորում ունեն ձեր ակումբի մարզիկները:

– 1998-ին թեքվանդոյի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Գագիկ Ներսիսյանի հրավերով Հայաստանում էր գտնվում Սեո Սյունգ Սուն եվրոպական մրցաշարերի տեխնիկական կոմիտեի նախագահը: Մեր մարզիկներից 2-ը երկրորդ դան ստացան, իսկ 9-ը՝ առաջին:

– Ինչպիսի՞ ծրագրեր ունեք:

– Նախապատրաստվում ենք 2000 թ.-ին կայանալիք 14-17 տարեկան պատանիների աշխարհի առաջնությանը:

– Իսկ ա՞ռ են ձեզ մոտ պարապել ցանկացողները:

– Ընդունելությունը ընթացքի մեջ է: Պարապել կարող են 7 տարեկանից սկսած, եւ տղաները եւ աղջիկները: Սահմանափակում չկա: Ընդունելության համար գանձվում է անդամավճար: Կան զեղչեր. զոհված ազատամարտիկների երեխաներից, ինչպես նաեւ նյութապես ծանր պայմաններում ապրող երեխաներից գումար չի գանձվում: Ես սիրով կնշեմ մեր հասցեն՝ Կորյունի 17, գյուղատնտեսական ակադեմիայի 4-րդ մասնաշենք, մարզադահլիճ:

Մենք հեռացանք, համոզված լինելով, որ այս պատանիներն ու աղջիկները մեծ ուշադրության ու լավ պայմանների են արժանի: Եվ ո՞վ է ասել, թե արեւելյան մարզաձեւը միայն չինացիների եւ ճապոնացիների մենաշնորհն է: Եթե կարող ենք բարձունքներ նվաճել, ապա ինչո՞ւ ոչ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տյուսիսային համալսարանի
ժուռնալիստիկայի ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանողուհի

ԲՈՆՑՔԱՍՄԱՐՏ

Արթուր Գրիգորյանի հերթական հաղթանակը

Գերմանական Օբերհաուզեն քաղաքում հերթական հանդիպումն անցկացրեց ու հերթական հաղթանակը տարավ պրոֆեսիոնալների 61,2 կգ քաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի բազմակի չեմպիոն Արթուր Գրիգորյանը: Ուզբեկստանը ներկայացնող մեր հայրենակիցը, որն արդեն մի քանի տարի է, ինչ ընտանիքով բնակվում է Գերմանիայում, այս անգամ հանդիպեց ամերիկացի Մայքլ Կլարկի հետ: Մրցամարտն անցավ Գրիգորյանի առավելությամբ, իսկ 5-րդ ռաունդում նա հուժկու հարվածով տապալեց իր մրցակցին՝ մեկ անգամ եւս ցույց տալով, որ թեթեւ քաշային կարգում իր հավասարը չունի: Տանելով հերթական հաղթանակը՝ 31-ամյա հայորդին պահպանեց աշխարհի չեմպիոնի կոչումը:

Օբերհաուզենում մրցեցին նաեւ ծանրքաշիններ, WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն Վիտալի Կլիչկոն (Ուկրաինա) եւ այդ կոչման հավակնորդ էդ Մեհորնը: 26-ամյա Կլիչկոն 3-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց իր մրցակցին եւ պահպանեց չեմպիոնի կոչումը: Սա Կլիչկոյի 26-րդ անընդմեջ հաղթանակն է պրոֆեսիոնալ ռինգում:

Ռինգում կանայք են

Պրոֆեսիոնալ բոքսամարտ են ներխուժում կանայք: Լեգենդար Մոհամեդ Ալիի դուստրը՝ Լեյլան, կարողացավ համոզել հորը եւ ռինգ մտնել: Նյու Յորքի նահանգի Վերոնա քաղաքում անցկացրած առաջին իսկ մենամարտը 21-ամյա թխամորթ գեղեցկուհու համար շատ հաջող էր: Առաջին ռաունդում Լեյլա Ալին նոկաուտով հաղթեց մրցակցուհուն՝ էմորի Ֆաուլերին:

Պատմության մեջ առաջին անգամ ռինգում պաշտոնապես հանդիպեցին տղամարդ եւ կին բոքսամարտիկներ: Սիթլ քաղաքում 4 ռաունդանոց մենամարտում մրցեցին նախկին նկարչուհի, 36-ամյա Մարգարետ Մաքրեգորը եւ 33-ամյա Լուի Շաուն: Հաղթեց «թույլ սեռի» ներկայացուցիչ Մարգարետը: Ավելացնենք, որ Շաուն մինչ այդ էլ պրոֆեսիոնալ ռինգում ոչ մի հաղթանակ չէր տարել: Ու նորից պարտվեց, այս անգամ՝ կին բոքսամարտիկից...

Գրոհում է Լեյլա Ալին (աջից)

ԹԵՆԻՍ

Դեւիսի գավաթի համար

Լոնդոնում, թենիսի միջազգային ֆեդերացիայի շտաբ բնակարանում անցկացվեց աշխարհի տղամարդկանց թիմային ոչ պաշտոնական առաջնության՝ Դեւիսի գավաթի 2000 թ. խաղարկության բարձրագույն խմբի 16 մասնակիցների վիճակահանությունը:

Ահա թե հանրահայտ թենիսիստ Բորիս Բեքերի թեթեւ ձեռքը որ հավանական թիմերին հանեց դեմհանդիման 1/8 փուլում. Շվեյցարիա-Ավստրալիա, Զիմբաբվե-ԱՄՆ, Բրազիլիա-Ֆրանսիա, Իսպանիա-Իտալիա, Ռուսաստան-Բելգիա, Սլովակիա-Ավստրիա, Գերմանիա-Հոլանդիա, Չեխիա-Անգլիա:

Մրցախաղերը կանցկացվեն եկող տարվա փետրվարի 4-6-ը:

Կարուսելը պտտվում է...

Վիեննայի մրցաշարը հաջող սկսեց ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովը: Առաջին շրջանում նա 6-4, 6-3 հաշվով հաղթեց էվեդ Թոմաս Էնքվիստին

Թենիսի խոշոր մրցաշարեր ավարտվեցին Բազելում, Շանհայում եւ Ֆելդերշտադում:

Բազելի միջազգային մրցաշարի եզրափակիչում հանդիպեցին Կարոլ Կուչերան (Սլովակիա) եւ Թիմ Հենմանը (Անգլիա): Մի քանի ժամ տեւած համառ պայքարն ավարտվեց Կուչերայի դժվարին հաղթանակով՝ 6-4, 7-6, 4-6, 7-6, 7-6 հաշվով:

Շանհայի մրցաշարի եզրափակիչն անծրեւի պատճառով մեկ օր ուշացումով անցկացվեց: Այստեղ գլխավոր մրցանակը նվաճեց էվեդ Մագնուս Նորմանը, որը վճռական խաղում 2-6, 6-3, 7-5 հաշվով պարտության մատնեց Մարսելո Ռիոսին (Չիլի): Որքան էլ տարօրինակ թվա, այս տարի ATP շարքի մրցաշարերում բոլորից շատ առաջին մրցանակներ շահել է Նորմանը. դրանց թիվը 5-ն է: Ամերիկացիներ Փիթ Սամփրասն ու Անդրե Ագասին ունեն 4-ական, իսկ իսպանացի Ալբերտո Կոստան ու գերմանացի Նիկոլաս Կիֆերը՝ 3-ական հաղթանակ:

Բայց յուրաքանչյուր ռեկորդը աշխարհի թիվ մեկ թենիսիստուհի Մարտինա Հինգիսին է պատկանում: Շվեյցարուհին, որն իր 19-ամյակը օրերս նշեց, այս տարի հաղթել է 6 մրցաշարերում: Ֆելդերշտադ քաղաքում անցկացված մրցաշարի եզրափակիչում Հինգիսը 6-4, 6-1 հաշվով պարտության մատնեց Ֆրանսուհի Մերի Պիրսին:

Այժմ ուժեղագույն թենիսիստներից շատերը հանդես են գալիս Վիեննայի (տղամարդիկ) եւ Ցյուրիխի (կանայք) միջազգային մրցումներում: Մրցաշրջանային կարուսելը պտտվում է...

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Մորավիա: 2. Բարբարոս: 3. Գառնի: 4. Մամխի: 5. Շաքարյան: 6. Չողաձուկ: 9. Ստերջ: 10. Ամբար: 16. Վոլվո: 17. Բահրա: 21. Հորդանան: 23. Սարաջախս: 24. Կաղուսան: 25. Հայնե: 26. Օմեգա: 27. Գերանդի: 31. Այրուս: 32. Կուլոն:

Հորիզոնական

7. Զորավար: 8. Կաղավոր: 11. Կարբոնաս: 12. Մոխրաման: 13. Հիդրա: 14. Արջառ: 15. Այրում: 18. Ոսկոր: 19. Մասնե: 20. Եհովա: 22. Արամ: 28. Մանրէ: 29. Մահմի: 30. Ամենն: 33. Շուբանյան: 34. Գյուրջյան: 35. «Հաստակում»: 36. Կոլխիդա:



Ուղղահայաց

1. Սարդարապատի ճակատամարտի մասնակից, հրամանատար: 2. Միքելանջելոյի աշխատանքներից: 3. Խրոխաբեր դեղաբույս: 4. Ռուս սովետական թատերական ռեժիսոր եւ բեմանկարիչ: 5. Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից: 6. Ռուս կոմպոզիտոր եւ դաշնակահար: 9. Մարդկանց մահապատժի ենթարկելու գործիք: 13. Հայ նկարիչ: 14. «Անուշ» օպերայի հեղինակը: 16. Լեհ գրող Լեմի ստեղծագործություններից: 17. Հայազգի զորավար: 22. Իսպանացի ազնվական: 23. «Վարպետը եւ Մարգարիտան» վեպի հեղինակը: 25. «Մոսկվայի վիրտուոզներ» խմբի ղեկավարը: 28. Լյարդի վիրուսային բորբոքումն ստացիոնը նկարագրող ռուս թերապեւտ: 29. Մանքոլ պարուսակող ցանովի բույս: 30. Ֆրանսիացի նկարիչ, «Լողացող կանայք» կտավի հեղինակը: 32. Նվագարան:

Հորիզոնական

7. Հայտնի հայ կենսաքիմիկոս, ակադեմիկոս: 8. Ուկրաինացի կին գրող: 10. Ջորջոնեի հայտնի ստեղծագործությունը: 11. Մենակ, առանձնացած: 12. Մոսկվաբնակ հայ էստրադային երգիչ, աստղ: 15. Գեղ Հայկական լեռնաշխարհում, Արեւմտյան Եփրատ: 18. Ռուս բնանկարիչ: 19. Միջնադարյան ճարտարապետական հուշարձան Էջմիածնում: 20. Հայ անվանի գինեկոլոգ: 21. Եվրոպական պետության մայրաքաղաք: 24. Երգարվեստի հետ կապված մասնագետ: 26. Հայ երիտասարդ բանաստեղծ, որը զոհվել է Հայրենական պատերազմում: 27. Ուկրաինացի խոշոր հողատեր, որը տարվել է Ուկրաինան Ռուսաստանից անջատելու գաղափարներով: 31. Իտալացի քանդակագործ եւ նկարիչ: 33. Դիպված, պատահար, խառնաշփոթ գործ: 34. Չուս, փափուշ: 35. Խորհրդային զորավար, մարշալ: 36. Խորհրդային ավիացիայի հայազգի մարշալ:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
ՕՐՎԱ ԹԵՍՏԵՐՈՎ

ԴԱՎ

Կոլյա Կոլեսնիկովի իմունային համակարգի վիճակը բարվոք է, արյունը՝ ոչ այնման

Գերմանացի բժիշկները մոտ օրերս կպարզեն «Արմենիկումի» զորությունը

Համբուրգի Բերհարդ Նոխտի արեւադարձային բժշկության ինստիտուտը Գերմանիայի նմանատիպ հնագույն հաստատություններից է: 1900-ին ինստիտուտը հիմնադրել է Համբուրգի նավահանգստի գլխավոր բժիշկ, ճանաչված գիտնական Ռոբերտ Կոխի ուսանող Բերհարդ Նոխտը: Նոխտը այստեղ բուժում էր արեւադարձային երկրներից ժամանած նավաստիներին եւ զբոսաշրջիկներին, հիմնականում մալարիա, արեւադարձային տենդ եւ այլն: Այժմ այստեղ ի թիվս մերձարեւադարձային հիվանդությունների, ուսումնասիրում կամ բուժում են ժամանակակից տարածված այլ հիվանդություններ: Հիվանդանոցում տարեկան բուժվում է մոտ 6 հազար այցելու: 1983-ից ինստիտուտը ակտիվորեն զբաղվում է ԴԱՎ-ի վիրուսի ուսումնասիրությամբ, ախտաբանվներ վարելով ոչ միայն ԳԴՀ-ում, այլեւ աֆրիկյան երկրներում, որտեղից էլ, ինչպես ապացուցված է, ներմուծվել է 20-րդ դարի ժանտախտը:

Կոլեսնիկովին ընդունեց ինստիտուտի կլինիկական բաժնի վարիչ պրոֆեսոր Մանֆրեդ Դիտրիխը: Հիվանդության պատմությանը ծանոթանալուց հետո պրն Դիտրիխը խոստովանեց, որ գիտության տեսանկյունից շատ հետաքրքիր կլինի «Արմենիկումի» եւ Կոլեսնիկովի հետազոտությունը. «Մենք պատրաստ ենք մանրակրկիտ անալիզներ անել»: Գերմանացի բժիշկները հիմնովին ծեռնամուխ եղան Կոլեսնիկովի ուսումնասիրությանը: Անալիզների ողջ համալիրն արժեր 2 հազար գերմանական մարկ: «Կոմսոմոլսկայա պրավդա» իր վրա է վերցրել Կոլյայի բժշկական քննության ողջ ծախսը, պարզելու «Արմենիկումի» ազդեցությունը:

Առաջին մեկնաբանությունները ստացվել են երկուշաբթի: Կիրակի օրը Կոլյային ներարկել էին տարբեր վիրուսների թուլացված տարբերակներ՝ մտուցելու օրգանիզմի պաշտպանական հակազդեցությունը: «Կոլեսնիկովի իմունային համակարգի ընդհանուր վիճակը բավարար է: Հայաստանից բերված հիվանդության պատմությունից կարելի է դատել, որ նրան ուժեղ իմունային խթանիչ է ներարկվել: Սակայն որեւէ ենթադրություն դեռ վաղ է անել: Իմ պրակտիկայում 15 տարի ԴԱՎ-ի վիրուսակիր մի հիվանդ է եղել, որի օրգանիզմում հիվանդությունը չէր զարգանում, սակայն վիրուսը բավականին կենսունակ էր, ասում է պրոֆեսոր Մանֆրեդ Դիտրիխը: Ինչ վերաբերում է Կոլեսնիկովի արյան անալիզներին, ապա այստեղ ամեն ինչ չէ, որ բարեհաջող է: Մենք հայտնաբերել ենք, որ նրա արյան բջիջները կամ կարճ են ապրում, կամ էլ արագ են սպառվում օրգանիզմում: Պատճառը գտնելու եւ բուժումը նշանակելու համար անհրաժեշտ է ողնուղեղից նմուշ վերցնել»:

Կոլեսնիկովի համաձայնությունը ստանալուց հետո բժիշկները սկսեցին հետազոտությունների նոր փուլը: Մոտ օրերս պարզ կդառնա, Կոլյան վիրուսակի՞ր է, թե ոչ: Այնպես որ, բախտորոշ օրվան միչ ժամանակ է մնում:

ԱՐ. Մ.

Խորհրդակցում են Մոսկվայի հայ բժիշկները

Մոսկվայում բնակվում են 300-ից ավելի բարձրակարգ հայազգի բժիշկներ՝ գիտության թեկնածուից մինչեւ ակադեմիկոս, եւ եթե նրանցից յուրաքանչյուրը իր հնարավորության սահմաններում, պրոֆեսիոնալ պատրաստվածությամբ օգնության ձեռ մեկնի բուժման կարիք ունեցող մոսկվացի թե հայաստանցի հայերին, դա կգնահատվի որպես ազգին ծառայելու ազնիվ առաքելություն՝ համաձոսկովյան հայ համայնքի լիդեր Նորիկ Մուրադյանը այսպես ողջունեց համայնքի հայ բժիշկների սեկցիայի անդրանիկ նիստի մասնակիցներին:

Հիրավի գիտական ու գործնական հզոր ուժ են ներկայացնում Ռուսաստանի մայրաքաղաքի հայ բժիշկները: Փաստորեն չկա բժշկագիտության որեւէ բնագավառ, որտեղ մեր հայրենակիցները ներկայացված չլինեն՝ ընդսմին բավականին հաճախ առաջատար մասնագետներով: Ներկա հավաքույթում հետաքրքիր շահագրգիռ խոսակցություն բացվեց Ռուսաստանի բժշկության ասպարեզում ստեղծված բարդ ու հակասական իրավիճակի եւ հայությանն օժանդակելու հնարավորությունների մասին: Երբ գոյություն ուներ Խորհրդային Միությունը, նշեց ակադեմիկոս Արմեն Բունիաթյանը, մենք իրապես կարող էինք օգնել ցանկացած հայի: Իսկ հիմա թերեւս միայն անձնական խորհուրդներն են անվճար: Ցավ եմ ապրում, ասաց նա, երբ տեսնում եմ, թե իմ հայ ասպիրանտները սովորելու հետ մեկտեղ ֆանի տեղ են հերթապահում՝ կենսական նվազագույնն ապահովելու եւ ուսման վարձը վճարելու համար: Պրոֆ. Արզումանովը նշեց, որ բարդ վիրահատությունների դիմող տասը հիվանդներից միայն մեկն է ի վիճակի վճարելու, եւ այդ պայմաններում բացառություն անել ըստ ազգային հատկանիշի՝ դժվար իրագործելի խնդիր է:

Ճանաչված վնասվածաբան պրոֆ. Հովհաննիսյանն առաջարկեց տեղի հայ բիզնեսմենների օգնությամբ ստեղծել բժշկական կենտրոն, որտեղ հայ բժիշկները կարողանան անվճար ընդունել հիվանդների:

Համայնքի հայ բժիշկների սեկցիայի ղեկավար ընտրվեց Մոսկվայի թիվ 23 կլինիկական հիվանդանոցի բաժնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու Ռոլանդ Մեհրաբյանը: Մեհրաբյանը մոսկվահայերի մեջ հայտնի է ոչ միայն որպես բարձրակարգ ախտորոշող բժիշկ, այլեւ հայրենակիցներին ծառայելու իր անշահախնդիր պատրաստակամությամբ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ֆիզիկայի գծով 1999 թ. նոբելյան մրցանակակիրներն են երկու հոլանդացի գիտնականներ

ՍՏՈԿՀՈԼՄ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Հոլանդացի գիտնականներ Գերարդուս Թ. Հորտը եւ Մարտինուս Ջ. Գ. Վելթմանն այսօր Շվեդիայի գիտությունների թագավորական ակադեմիայի կողմից նշվել են որպես ֆիզիկայի գծով 1999 թ. նոբելյան մրցանակի դափնեկիրներ:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, նրանք հեղինակավոր պարգեւին են արժանացել էլեկտրոնային թույլ փոխազդեցության տեսության էվանտային կազմույթի բնագավառում ներդրած ակնառու ավանդի համար: Նրանց աշխատությունները մասնիկների ֆիզիկական տեսությանը ավելի հաստատուն մաթեմատիկական հիմք են հաղորդել: Նրանք մասնավորապես ցույց են տվել, թե այդ տեսությունն ինչպես կարող է օգտագործվել ֆիզիկական մեծությունների սույգ հաշվարկման համար:

Երկու գիտնականներն էլ Ուտրեխտի համալսարանի ֆիզիկայի պրոֆեսորներ են:

ՎԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտաքսի շրջանի խաղողագործների կողմից մեր խորին երախտագիտությունը եւ շնորհակալությունն ենք հայտնում Երեւանի կոնյակի գործարանի ղեկավարությանը՝ հայ գյուղացուն ձեռ մեկնելու, խաղողի բերքը հազարավոր տոննաներով մթերելու գործում:

Արդեն 2 տարվա համագործակցությունը գործարանի հետ մեզ գյուղացիներիս, նոր լիցք, հավաս, ուժ եւ եռանդ է ներշնչում Արարատյան դաշտավայրում զարգացնելու խաղողագործությունը, ավելացնելու խաղողի բերքի ծավալները եւ հիմնելու նորանոր այգիներ:

Միաժամանակ հույս ենք հայտնում, որ այսուհետեւ կառավարությունը նույնպես սատար կլինի մեզ՝ թեթեւացնելով մեր առօրյա հոգսերը: Պարտավորվում ենք այսուհետեւ ստանալ ավելի որակյալ խաղողի բերք նպատակ ունենալով բարձր պահել հայկական կոնյակի բարի համբավը:

ՄՎՈՎ 100 ԽԱՂՈՂԱԳՈՐԾԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի ՈՒՐԱԽ ԱՐԱԳԾՈՂՆԵՐԻ

Հոկտեմբերի 14-ին, ժամը, 11-ին, ժուռնալիստների միությունում արտասահմանյան թղթակիցների ասոցիացիայի նախաձեռնությամբ տեղի կունենա «Փրկության օր» ընկերակցության անդամների մամուլի ասուլիս, որին կմասնակցեն այդ կազմակերպության նախագահ Կոնստանտին Տեր-Հովհաննիսյանը, գրող, հրապարակախոսներ Կիմ Բակչին, Լեւոն Միրիջանյանը եւ ազգությունների միության նախագահ Վլադիմիր Չատուրը:

ARMENTEL

ԱՐՄԵՆՏԵԼԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

Ընթացքի մեջ է թիվ 55/57 ԱՀԿ-ների վերամիացումը նոր թվային հեռախոսակայանին եւ բաժանորդային ցանցի ընդլայնումը, ինչը հնարավորություն է տալիս նոր հեռախոսների տեղադրման: Արդեն պատրաստ է Սարի թաղ թաղամասի բաժանորդային ցանցը, ուստի Սարի թաղի այն բնակիչները, ովքեր դիմել են հեռախոս ստանալու, ս. թ. հոկտեմբեր ամսից հրավիրվում են թիվ 55/57 ԱՀԿ-ների բաժանորդների սպասարկման բաժին՝ Չարենցի 76 հասցեով, հեռախոսների տեղադրումը ծեւակերպելու համար:

Բնակիչը պետք է ներկայացնի.

1. Անձնագիր կամ բնակարանի սեփականության իրավունք
2. Տեղադրման միանվագ վարձը՝ 24000 դրամ:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի գյուղացիական փոխօգնության բանկը
հրավիրում է աշխատանքի՝

- հաշվապահներ
- ծրագրավորողներ
- օպերատորներ

Կրթությունը՝ բարձրագույն մասնագիտական, պարտադիր անգլերեն լեզվի իմացությամբ, տարիքը՝ մինչեւ 28 տարեկան:

Դիմումներն ընդունվում են մինչեւ ս. թ. նոյեմբերի 15-ը հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Բայրոնի 1, հեռ. 52-51-69, 56-58-58:

ԼՈՒԾԱՐՎԱԾ Է

«Արտակ» սանիտարական ծեռնարկությունը, գրանցված 25.08.1995 թ. Աշտարակի պետեգիստրում: Գրանցման համարը 16.020.00210: Վկայականի համարը 015913:

Պարտատերերը երկամսյա ժամկետում կարող են դիմել ք. Աշտարակ, Նարեկացու 81 հասցեով:

ԼՈՒԾԱՐՎԱԾ Է

«Վահագն» ՍՊԸ-ն՝ գրանցված Շենգավիթի շրջանում, գր. հ. 269.110.01087, վկ. հ. 01 Ա-022487, 01.02.96 թ.:

Պարտատերերը 2 ամսվա ընթացքում դիմեն ք. Երեւան, Ա. Տարոնցի փող. տուն 14:

Լուծարման հանձնաժողով

ԼՈՒԾԱՐՎԱԾ Է

«Ամրան» կոոպերատիվը գրանցված 1995 թ. պետեգիստրի Աշտարակի բաժանմունքում: Գրանցման համարը 5608000300, վկայականի համարը 020607:

Պարտատերերը 2 ամսվա ընթացքում դիմեն ք. Աշտարակ, Սպանդարյան 38, բն. 42 հասցեով:

ՀԵՌՈՒՏԱԾՐԱԳՐԵՐ

13 հոկտեմբեր

1

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
16.00 Նորություններ
16.15 Հրաշալի ընկերախումբ
16.35 Ցունգլիների կանչը
17.05 Մինչեւ 16 եւ բարձր
17.35 Գ/Ֆ «Այց մինոտավրոսին» (3-րդ սերիա)
19.00 Նորություններ
19.25 Դիմակներ տու
20.00 Մարդը եւ օրենքը
20.45 Սերիալ «Հանուն սիրո»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Ոստիկանական ընտանիքը 2» (դերերում Դ. Բրոնսոն, Բ. Ռիլյանս, ԱՄՆ-Կանադա, 1996 թ.)
24.45 Քաղաքական անցնող դարաշրջանի հանճարներն ու չարագործները. Գեորգի Չիչերին եւ Վոլֆգանգ Մոցարտ
01.15 Նորություններ
01.35 Գ/Ֆ «Դավադրություն ընդդեմ վախի» (դերերում Դ. Դեյիս, Լ. Հոուի, Է. Լոուրի, Կանադա, 1994 թ.)

РТР

7.35-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հերթապահ բաժանմունք
10.20 Հոմեոպատիա եւ առողջություն
10.30 Հեռուստահանդես «Արենա-պրոստոր»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
12.50 Հոմեոպատիա եւ առողջություն
13.00 Իմ ընտանիքը
13.50 Հոմեոպատիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.20 Երկու դաշնամուր
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.05 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Սուլտանգիր
18.20 Աշտարակ
18.55 Սերիալ «Կոմիսար Ռեքսը»
20.30 Ռուսական սերիա. «Վենեռայի հայելու մեջ»
21.25 Ինքդ քեզ ռեժիսոր
22.50 Երաժշտական դիսկ. նոր սերունդ
00.40 Հրապարակախոսական թոք-շոու «Ժողովուրդն ուզում է իմանալ»
00.55 Հերթապահ բաժանմունք
01.15 Կինո+TV
02.20 Խանութ բազմոցի վրա

17.00 Հայլուր
17.20 Երաժշտական կինոնկար «Ո՞վ է կոտրել ծայնաստակը»
18.00 Մարդը եւ օրենքը. Հենրիկ Խաչատրյան
19.00 Պարմանի
19.30 Հեռուստասերիալ «Կրթեր»
20.00 Այսօր
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.45 Ազգային ժողովի նիստում. հարցեր կառավարությանը
23.25 «02» (Արբանյակային հեռարձակմամբ
21.45 Գ/Ֆ «Տերը»
23.35 Փաստագրական կինոնկար «Վերջին ֆայտոնը»)
00.00 Հայլուր
00.20 Կեսգիշերային ճեռընթաց
01.20 Ռուբիկոն+ Արբանյակային հեռարձակմամբ
02.00 Հեռուստասերիալ «Իմ երկրորդ մայրը»

Մշակույթ

19.00 Մ/Ֆ «Դե, սոլասիր» (9-րդ մաս)
19.15 «Ներկայանակ». Նիկոլա Պուսսենի «Տարվա եղանակներ» կտավը
19.50 Համերգ. Ալեքսանդր Կարաոեչյան եւ «Մարաթուկ» անսամբլ
20.00 Հեռուստաֆիլմ «Վահագն Դավթյան»
20.30 Լուրեր
21.05 «Նապոլեոնը եւ Եվրոպան» (3-րդ մաս)
22.00 Միրեցեմ զմիմեանս
22.15 «Ցաղ-շրջանակ»
22.45 Գ/Ֆ «Առաջիկ հարսնացուն» (23.45 Լուրեր)

9

9.00 Տոմար
առաջին Ավետա (կրկնություն)
19.00 «Ղոցիկը» ներկայացնում է. բնաբխարհ
19.30, 21.30, 23.30, 2.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.00 Գիտաստղեր
20.30 Կամ... կամ
21.10 Ղոցիկ
21.50 Գ/Ֆ «Վերջին խոսքը»
24.00 Անդորր
0.05 Երաժշտական դադար
0.10 Սուր սենյակ
0.30 Ֆասոն (Fasion ծրագրի շարաթվա ընտրանի)
1.00 Գ/Ֆ «Նիհարողը»

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (590000), տեղեկագրով (1800 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Ցիրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 1134 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 12.10.1999 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@